# Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 39

## *Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը*

1. [Հանված է]

## Գործողության ոլորտը

**2. Սույն ստանդարտը պետք է կիրառվի բոլոր կազմակերպությունների կողմից *«Ֆինանսական գործիքներ»* ՖՀՄՍ 9-ի շրջանակներում բոլոր տեսակի ֆինանսական գործիքների նկատմամբ այն դեպքում և այնքանով, որքանով՝**

**ա) ՖՀՄՍ 9-ը թույլատրում է սույն Ստանդարտի՝ հեջի հաշվառման պահանջների կիրառումը, և**

**բ) ֆինանսական գործիքը մաս է կազմում հեջավորման փոխհարաբերության, որը որակվում է որպես հեջի հաշվառման ենթակա սույն Ստանդարտին համապատասխան:**

2Ա-7. [Հանված է]

## Սահմանումներ

8. ՖՀՄՍ 13-ում, ՖՀՄՍ 9-ում և ՀՀՄՍ 32-ում սահմանված տերմինները սույն ստանդարտում օգտագործվում են ՖՀՄՍ 13-ի Հավելված Ա-ում, ՖՀՄՍ 9-ի Հավելված Ա-ում և ՀՀՄՍ 32-ի 11-րդ պարագրաֆում ներկայացված իմաստներով: ՖՀՄՍ 13-ը, ՖՀՄՍ 9-ը և ՀՀՄՍ 32-ը սահմանում են հետևյալ տերմինները՝

- ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք,
- ապաճանաչում,
- ածանցյալ գործիք,
- արդյունքային տոկոսադրույքի մեթոդ,
- արդյունքային տոկոսադրույք,
- բաժնային գործիք,
- իրական արժեք,
- ֆինանսական ակտիվ,
- ֆինանսական գործիք,
- ֆինանսական պարտավորություն,

և տրամադրում են ուղեցույց՝ նշված տերմինները կիրառելու համար:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

9. Ստորև բերված տերմինները սույն ստանդարտում օգտագործվում են հետևյալ իմաստներով.

Հեջի հաշվառմանը վերաբերող սահմանումներ

*Կայուն հանձնառություն.* սահմանված քանակի ռեսուրսներ սահմանված գնով սահմանված ապագա ամսաթվին կամ ամսաթվերին փոխանակելու պարտավորեցնող համաձայնություն:

*Կանխատեսված գործարք.* չպարտավորված, սակայն ակնկալվող ապագա գործարք:

*Հեջավորման գործիք.* նախորոշված ածանցյալ գործիք կամ (միայն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ռիսկի հեջավորման դեպքում) ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվ կամ ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություն, որի իրական արժեքը կամ դրամական հոսքերը ակնկալվում է, որ կչեզոքացնեն նախորոշված հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի փոփոխությունները (72-77-րդ պարագրաֆները և Ա հավելվածի ԿՈՒ94-ԿՈՒ97 պարագրաֆները ավելի են մանրամասնում հեջավորման գործիքի սահմանումը):

*Հեջավորված հոդված.* ակտիվ, պարտավորություն, կայուն հանձնառություն, մեծապես հավանական կանխատեսված գործարք կամ զուտ ներդրում արտերկրյա ստորաբաժանման մեջ, որը՝ (ա) կազմակերպությանը ենթարկում է իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի փոփոխությունների ռիսկի, և (բ) նախորոշվում է որպես հեջավորվող (78-84-րդ պարագրաֆները և Ա հավելվածի ԿՈՒ98-ԿՈՒ101 պարագրաֆները ավելի են մանրամասնում հեջավորված հոդվածի սահմանումը):

*Հեջի արդյունավետություն.*՝ այն աստիճանը, որքանով հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ դրամական հոսքերի փոփոխությունները, որոնք վերագրելի են հեջավորված ռիսկին, չեզոքացվում են հեջավորման գործիքի իրական արժեքի կամ դրամական հոսքերի փոփոխություններով (տե՛ս Ա հավելվածի ԿՈՒ105 - ԿՈՒ113Ա պարագրաֆները):

10-70. [Հանված է]

## Հեջավորում

71. Եթե կազմակերպությունը կիրառում է ՖՀՄՍ 9-ը և որպես իր հաշվապահական հաշվառման քաղաքականություն չի որոշել շարունակել կիրառել սույն Ստանդարտով նախատեսված հեջի հաշվառմանը վերաբերող պահանջները (տե՛ս՝ ՖՀՄՍ 9-ի 7.2.21 պարագրաֆը), այն պետք է կիրառի ՖՀՄՍ 9-ի Գլուխ 6-ով նախատեսված պահանջները: Այնուամենայնիվ, ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների պորտֆելի մի մասի տոկոսադրույքի ռիսկին ենթարկվածության իրական արժեքի հեջի համար կազմակերպությունը, ՖՀՄՍ 9-ի

**6.1.3 պարագրաֆի համաձայն, կարող է կիրառել սույն Ստանդարտով նախատեսված հեջի հաշվառման պահանջները ՖՀՄՍ 9-ով նախատեսված պահանջների փոխարեն: Այդ դեպքում կազմակերպությունը պետք է նաև կիրառի տոկոսադրույքի ռիսկի պորտֆելային հեջի գծով իրական արժեքի հեջի հաշվառման հատուկ պահանջները (տե՛ս՝ 81Ա, 89Ա և ԿՈՒ114-ԿՈՒ132 պարագրաֆները):**

## Հեջավորման գործիքներ

### Գործիքների որակումը

72. Սույն ստանդարտով չեն սահմանափակվում այն հանգամանքները, որոնց դեպքում ածանցյալ գործիքը կարող է նախորոշվել որպես հեջավորման գործիք, եթե բավարարված են պարագրաֆ 88-ի պայմանները, բացառությամբ որոշ տրված օպցիոնների (տես Հավելված Ա-ի պարագրաֆ ԿՈՒ94-ը): Այնուամենայնիվ, ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվը կամ ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունը կարող է նախորոշվել որպես հեջավորման գործիք միայն արտարժութային ռիսկի հեջի նպատակով:

73. Հեջի հաշվառման նպատակներով՝ որպես հեջավորման գործիքներ կարող են նախորոշվել միայն այն գործիքները, որոնց մի կողմը հաշվետու կազմակերպության հանդեպ հանդիսանում է արտաքին կողմ (այսինքն,՝ արտաքին է խմբի կամ առանձին կազմակերպության նկատմամբ, որի համար ներկայացվում են հաշվետվություններ): Թեև համախմբված խմբի կազմի մեջ մտնող առանձին կազմակերպություններ կամ կազմակերպության առանձին ստորաբաժանումներ կարող են խմբի այլ կազմակերպությունների կամ կազմակերպության այլ ստորաբաժանումների հետ իրականացնել հեջավորման գործարքներ, բոլոր այդպիսի միջխմբային գործարքները համախմբման ժամանակ փոխվերացվում են: Այդ պատճառով, նման հեջավորման գործարքները խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում չեն որակվում որպես հեջի հաշվառման ենթակա գործարքներ: Այդուհանդերձ, դրանք կարող են որակվել որպես հեջի հաշվառման ենթակա գործարքներ՝ խմբի առանձին կազմակերպությունների անհատական կամ առանձին ֆինանսական հաշվետվություններում, եթե դրանք հաշվետվություն ներկայացնող առանձին կազմակերպության նկատմամբ արտաքին հանդիսացող կողմի հետ են:

### Հեջավորման գործիքների նախորոշումը

74. Սովորաբար գոյություն ունի հեջավորման գործիքի՝ որպես ամբողջության, մեկ իրական արժեք, և գործոնները, որոնք բերում են այդ իրական արժեքի փոփոխության՝ փոխկախված են: Այսպիսով, կազմակերպության կողմից հեջավորման փոխհարաբերությունը նախորոշվում է հեջավորման գործիքի՝ որպես ամբողջության համար: Թույլատրվող միակ բացառություններն են՝

ա) օպցիոնային պայմանագրի ներհատուկ արժեքի և ժամանակային արժեքի առանձնացումը և միայն ներհատուկ արժեքի փոփոխության նախորոշումը որպես հեջավորման գործիք, միաժամանակ բացառելով ժամանակային արժեքի փոփոխությունը, և

բ) ֆորվարդային պայմանագրի տոկոսային բաղադրիչի և սփոթ գնի առանձնացումը:

Այս բացառությունները թույլատրված են, որովհետև օպցիոնի ներհատուկ արժեքը և ֆորվարդի պարգևավճարը, սովորաբար, կարող են չափվել առանձին: Դինամիկ հեջավորման ռազմավարությունը, որը գնահատում է օպցիոնային պայմանագրի ներհատուկ արժեքն ու ժամանակային արժեքը, կարող է որակվել որպես հեջի հաշվառման ենթակա:

75. Հեջավորման փոխհարաբերության մեջ որպես հեջավորման գործիք կարող է նախորոշվել ամբողջ հեջավորման գործիքի միայն մի մասը, օրինակ՝ անվանական արժեքի 50 տոկոսը: Սակայն, հեջավորման փոխհարաբերությունը չի կարող նախորոշվել հեջավորման գործիքի գոյության ժամանակահատվածի միայն մի մասի համար:

76. Հեջավորման մեկ առանձին գործիքը կարող է նախորոշվել որպես մեկից ավելի տիպի ռիսկերի հեջ, եթե՝ (ա) հեջավորվող ռիսկերը կարող են հստակորեն որոշվել, (բ) հեջի արդյունավետությունը հնարավոր է ցուցադրել, և (գ) հնարավոր է համոզվել, որ առկա է հեջավորման գործիքի և տարբեր ռիսկային դիրքերի համար առանձնակի նախորոշում:

77. Երկու կամ ավելի ածանցյալ գործիքներ կամ նրանց մասերը (կամ արտարժութային ռիսկի հեջի դեպքում երկու կամ ավելի ոչ ածանցյալ գործիքներ կամ դրանց մասերը, կամ ածանցյալ գործիքների և ոչ ածանցյալ գործիքների կամ դրանց մասերի համակցությունը) կարող են դիտարկվել համակցության մեջ և համատեղ նախորոշնախորոշվել որպես հեջավորման գործիք, ներառյալ այն դեպքերը, երբ որոշ ածանցյալ գործիքներից առաջացող ռիսկը (ռիսկերը) փոխհատուցում է (են) մյուսներից առաջացող ռիսկերը: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի քոլարը կամ այլ ածանցյալ գործիք, որը միավորում է տրված օպցիոնը և ձեռք բերված օպցիոնը, չի որակվում որպես հեջավորման գործիք, եթե այն իրականում տրված զուտ օպցիոն է (որի համար ստացվում է զուտ պարգևավճար): Նմանապես, երկու կամ ավելի ածանցյալ գործիքներ (կամ դրանց մասերը) կարող են նախորոշվել որպես հեջավորման գործիք միայն այն դեպքում, եթե դրանցից ոչ մեկը չի հանդիսանում տրված օպցիոն կամ տրված զուտ օպցիոն:

## Հեջավորված հոդվածներ

### Հոդվածների որակումը

78. Հեջավորված հոդվածը կարող է լինել ճանաչված ակտիվ կամ պարտավորություն, չճանաչված կայուն հանձնառություն, մեծապես հավանական կանխատեսված գործարք կամ արտերկրյա ստորաբաժանման մեջ զուտ ներդրում: Հեջավորված հոդվածը կարող է լինել՝ (ա) առանձին ակտիվ, պարտավորություն, կայուն հանձնառություն, մեծապես հավանական կանխատեսված գործարք կամ արտերկրյա ստորաբաժանման մեջ զուտ ներդրում, (բ) ակտիվների, պարտավորությունների, կայուն հանձնառությունների, մեծապես հավանական կանխատեսված գործարքների կամ արտերկրյա ստորաբաժանման մեջ զուտ ներդրումների խումբ՝ ռիսկի համանման բնութագրերով, կամ (գ) միայն տոկոսադրույքի ռիսկի համար պորտֆելի հեջի դեպքում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների պորտֆելի այն մասը, որը կրում է հեջավորվող միևնույն ռիսկը:

79. [Հանված է]

80. Հեջի հաշվառման նպատակներով, որպես հեջավորված հոդվածներ, կարող են նախորոշվել միայն կազմակերպության նկատմամբ արտաքին կողմ ներգրավող ակտիվները, պարտավորությունները, չճանաչված կայուն հանձնառությունները կամ մեծապես հավանական կանխատեսված գործարքները: Այստեղից հետևում է, որ հեջի հաշվառումը կիրառելի է նույն խմբի կազմակերպությունների միջև կայացած գործարքների համար և կարող է օգտագործվել միայն այդ կազմակերպությունների անհատական կամ առանձին ֆինանսական հաշվետվություններում, բայց ոչ խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ ՖՀՄՍ 10-ով սահմանված ներդրումային կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվությունների, երբ որ ներդրումային կազմակերպության և իր՝ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող դուստր կազմակերպությունների միջև գործարքները համախմբված ֆինանսական հաշվետվություններում չեն բացառվի: Որպես բացառություն, ներխմբային որևէ դրամային հոդվածի (օրինակ, երկու դուստր կազմակերպությունների միջև կրեդիտորական/դեբիտորական պարտքերի) արտարժութային ռիսկը կարող է որակվել որպես հեջավորված հոդված համախմբված ֆինանսական հաշվետվություններում, եթե այդ ռիսկին ենթարկվածության հետևանքով համախմբման ժամանակ փոխարժեքից օգուտը կամ վնասը ամբողջությամբ չեն փոխվերացվել՝ համաձայն *«Արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքները»* ՀՀՄՍ 21 -ի: Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ ներխմբային դրամային հոդվածների զծով փոխանակման փոխարժեքից օգուտները և վնասները ամբողջությամբ չեն փոխվերացվում համախմբման ժամանակ, եթե ներխմբային դրամային հոդվածը գործարքի առարկա է խմբի երկու կազմակերպությունների միջև, որոնք ունեն տարբեր ֆունկցիոնալ արժույթներ: Բացի դրանից, ներխմբային մեծապես հավանական կանխատեսված գործարքի արտարժութային ռիսկը կարող է որակվել որպես հեջավորված հոդված համախմբված ֆինանսական հաշվետվություններում, եթե գործարքը սահմանված է գործարք կատարող կազմակերպության ֆունկցիոնալ

արժույթից տարբերվող արժույթով, և արտարժույթի փոխարժեքի ռիսկը կազդի համախմբված շահույթի կամ վնասի վրա:

**Ֆինանսական հոդվածների նախորոշումը որպես հեջավորված հոդված**

81. Եթե հեջավորված հոդվածը ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն է, այն կարող է լինել հեջավորված հոդված իր դրամական հոսքերի կամ իրական արժեքի միայն մի մասի հետ կապված ռիսկերի առնչությամբ (ինչպես օրինակ, մեկ կամ մի քանի ընտրված պայմանագրային հոսքերը կամ դրանց մի մասը կամ իրական արժեքի որևէ տոկոսը), եթե արդյունավետությունը հնարավոր է չափել: Օրինակ, տոկոսակիր ակտիվի կամ տոկոսակիր պարտավորության տոկոսադրույքի ռիսկին ենթարկվածության որոշելի և առանձին չափելի մասը կարող է նախորոշվել որպես հեջավորվող ռիսկ (ինչպես օրինակ, հեջավորված ֆինանսական գործիքի ամբողջ տոկոսադրույքի ռիսկին ենթարկվածության մեջ ոչ ռիսկային տոկոսադրույքի կամ ուղենշային տոկոսադրույքի բաղադրիչը):

81Ա. Ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի իրական արժեքի հեջի դեպքում (և միայն այդ դեպքում), հեջավորված մասը կարող է նախորոշվել արժույթի գումարի տեսքով (օրինակ, որպես որևէ գումար դոլարով, եվրոյով, ֆունտով կամ ռանդով), այլ ոչ թե որպես առանձին ակտիվներ (կամ պարտավորություններ): Թեև պորտֆելը, ռիսկի կառավարման նպատակներով, կարող է ներառել ակտիվներ և պարտավորություններ, նախորոշված գումարը իրենից ներկայացնում է որևէ գումարի ակտիվներ կամ որևէ գումարի պարտավորություններ: Ակտիվների և պարտավորությունների զուտ գումարի նախորոշում չի թույլատրվում: Կազմակերպությունը կարող է հեջավորել այդ նախորոշված գումարին առնչվող տոկոսադրույքի ռիսկի մի մասը: Օրինակ, վաղաժամկետ վճարման հնարավորությամբ ակտիվներ ներառող պորտֆելի հեջավորման ժամանակ կազմակերպությունը կարող է հեջավորել իրական արժեքի այն փոփոխությունը, որը վերագրելի է հեջավորված տոկոսադրույքի փոփոխությանը՝ հիմնված վերագնորոշման ակնկալվող, այլ ոչ թե պայմանագրային ամսաթվերի վրա: Երբ հեջավորված մասը հիմնված է վերագնորոշման ակնկալվող ամսաթվերի վրա, հեջավորված տոկոսադրույքի փոփոխությունների ազդեցությունը այդ ակնկալվող ամսաթվերի վրա պետք է ներառվի հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխության հաշվարկի մեջ: Հետևաբար, վաղաժամկետ վճարման հնարավորությամբ հոդվածներ ներառող պորտֆելի հեջավորումը վաղաժամկետ վճարման հնարավորություն չնախորոշող ածանցյալ գործիքով հանգեցնում է անարդյունավետության, եթե վերանայվում են հեջավորված պորտֆելի հոդվածների նախապես վճարման ակնկալվող ամսաթվերը, կամ վաղաժամկետ վճարումների փաստացի ամսաթվերը տարբերվում են ակնկալվող ամսաթվերից:

**Ոչ ֆինանսական հոդվածների նախորոշումը որպես հեջավորված հոդված**

**82. Եթե հեջավորված հոդվածը ոչ ֆինանսական ակտիվ կամ ոչ ֆինանսական պարտավորություն է, այն պետք է նախորոշվի որպես հեջավորված հոդված՝ (ա) արտարժութային ռիսկերի համար, կամ (բ) ամբողջությամբ բոլոր ռիսկերի համար, քանի որ դժվար է առանձնացնել և չափել դրամական հոսքերի կամ իրական արժեքի փոփոխության համապատասխան մասը, որը վերագրելի է արտարժույթային ռիսկերից տարբեր այլ յուրահատուկ ռիսկերի:**

## Հոդվածների խմբի նախորոշումը որպես հեջավորված հոդված

83. Համանման ակտիվները կամ համանման պարտավորությունները պետք է համախմբվեն և հեջավորվեն որպես մեկ խումբ, միայն եթե խմբի առանձին ակտիվները կամ առանձին պարտավորությունները կիսում են ենթարկվածությունը այն ռիսկին, որի գծով նրանք նախորոշվել են որպես հեջավորվող: Ավելին, խմբի յուրաքանչյուր հոդվածի գծով հեջավորված ռիսկին վերագրելի իրական արժեքի փոփոխությունը ակնկալվում է, որ պետք է մոտավորապես համեմատական լինի հոդվածների այդ խմբի գծով հեջավորված ռիսկին վերագրելի իրական արժեքի ընդհանուր փոփոխությանը:

84. Քանի որ կազմակերպությունը գնահատում է հեջի արդյունավետությունը՝ համեմատելով հեջավորման գործիքի (կամ համանման հեջավորման գործիքների խմբի) և հեջավորված հոդվածի (կամ համանման հեջավորված հոդվածների խմբի) իրական արժեքի կան դրամական հոսքերի փոփոխությունները, հեջավորման գործիքի համեմատումը ընդհանուր զուտ դիրքի հետ (օրինակ, համանման մարման ժամկետներով ֆիքսված դրույքով բոլոր ակտիվների և ֆիքսված դրույքով բոլոր պարտավորությունների զուտ գումարի հետ), այլ ոչ թե որոշակի հեջավորված հոդվածի հետ, չի որակվում որպես հեջի հաշվառման ենթակա:

## Հեջի հաշվառումը

85. Հեջի հաշվառմամբ ճանաչվում են հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի իրական արժեքների փոփոխությունների՝ միմյանց չեզոքացնող ազդեցությունները շահույթի կամ վնասի վրա:

**86. Հեջավորման փոխհարաբերությունները լինում են երեք տեսակի՝**

**ա) *իրական արժեքի հեջ.* ճանաչված ակտիվի կամ պարտավորության կամ չճանաչված կայուն հանձնառության, կամ այդ ակտիվի, պարտավորության կամ կայուն հանձնառության որոշակիացված մասի իրական արժեքի փոփոխությունների այնպիսի ենթարկվածության հեջ, որը վերագրելի է որոշակի ռիսկի և կարող է ազդեցություն ունենալ շահույթի կամ վնասի վրա,**

**բ) *դրամական հոսքերի հեջ.* դրամական հոսքերի փոփոխականությանը ենթարկվածության հեջ, որը՝**

(i) վերագրելի է ճանաչված ակտիվի կամ պարտավորության (ինչպիսին են փոփոխական տոկոսադրույքով պարտքի գծով ապագա տոկոսային բոլոր կամ որոշ վճարումները) կամ մեծապես հավանական կանխատեսված գործարքի հետ կապված որոշակի ռիսկի, և

(ii) կարող է ազդեցություն ունենալ շահույթի կամ վնասի վրա,

գ) *արտերկրյա ստորաբաժանման մեջ զուտ ներդրման հեջ*, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 21-ում:

87. Կայուն հանձնառության արտարժութային ռիսկի հեջը կարող է հաշվառվել որպես իրական արժեքի կամ դրամական հոսքերի հեջ:

88. Հեջավորման փոխհարաբերությունը բավարարում է հեջի հաշվառման պահանջներին ըստ 89-102-րդ պարագրաֆների այն և միայն այն դեպքում, եթե բավարարվում են բոլոր հետևյալ պայմանները՝

ա) հեջի սկզբի դրությամբ գոյություն ունի հեջավորման փոխհարաբերության և հեջի իրականացման հետ կապված կազմակերպության ռիսկերի կառավարման նպատակների և ռազմավարության ֆորմալ նախորոշում և փաստաթղթավորում: Այդ փաստաթղթերի մեջ պետք է նույնականացվեն հեջավորման գործիքը և հեջավորված հոդվածը կամ գործառնությունը, հեջավորվող ռիսկի բնույթը, և թե ինչպես է կազմակերպությունը գնահատելու հեջավորման գործիքի արդյունավետությունը՝ կապված հեջավորված հոդվածների՝ հեջավորված ռիսկերին վերագրելի իրական արժեքի կամ դրամական հոսքերի փոփոխություններին ենթարկվածությունը չեզոքացնելու հետ,

բ) ակնկալվում է, որ հեջը կլինի մեծապես արդյունավետ (տե՛ս հավելված Ա-ի ԿՈՒ105-ԿՈՒ113Ա պարագրաֆները) հեջավորված ռիսկին վերագրելի իրական արժեքի կամ դրամական հոսքերի փոփոխությունների չեզոքացման գործում՝ տվյալ հեջավորման փոխհարաբերության գծով ռիսկերի կառավարման սկզբնապես փաստաթղթավորված ռազմավարությանը համապատասխան,

գ) դրամական հոսքերի հեջերի դեպքում հեջի առարկա հանդիսացող կանխատեսված գործարքը պետք է լինի մեծապես հավանական և պետք է ցուցաբերի ենթարկվածություն դրամական հոսքերի տատանումների նկատմամբ, որոնք, ի վերջո, կարող են ազդել շահույթի կամ վնասի վրա,

դ) հեջի արդյունավետությունը հնարավոր է արժանահավատորեն չափել, այսինքն՝ հեջավորված հոդվածի իրական արժեքը կամ դրամական հոսքերը, որոնք վերագրելի են հեջավորված ռիսկին, ինչպես նաև հեջավորման գործիքի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել,

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ե) հեջը գնահատվում է անընդհատ հիմունքով և որոշվում է, որ այն փաստացի եղել է մեծապես արդյունավետ այն հաշվետու ֆինանսական ժամանակաշրջանների ընթացքում, որոնց համար այն նախորոշված էր:

## Իրական արժեքի հեջեր

89. Եթե իրական արժեքի հեջը ժամանակաշրջանի ընթացքում բավարարում է պարագրաֆ 88-ի պայմաններին, ապա այն պետք է հաշվառվի հետևյալ կերպ՝

ա) հեջավորման գործիքի՝ իրական արժեքով վերաչափումից օգուտը կամ կորուստը (հեջավորման ածանցյալ գործիքի դեպքում), կամ դրա հաշվեկշռային արժեքի՝ ՀՀՄՍ 21-ի համաձայն չափված արտարժութային բաղադրիչը (հեջավորման ոչ ածանցյալ գործիքի դեպքում) պետք է ճանաչվեն շահույթում կամ վնասում, և

բ) հեջավորված ռիսկին վերագրելի՝ հեջավորված հոդվածի գծով օգուտը կամ կորուստը պետք է ճշգրտի հեջավորված հոդվածի հաշվեկշռային արժեքը և ճանաչվի շահույթում կամ վնասում: Այս դրույթը կիրառվում է, եթե հեջավորված հոդվածը այլապես կչափվեր սկզբնական արժեքով: Հեջավորված ռիսկին վերագրելի օգուտի կամ կորստի ճանաչումը շահույթում կամ վնասում կիրառվում է, եթե հեջավորված հոդվածը հանդիսանում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ ՖՀՄՍ 9-ի 4.1.2Ա պարագրաֆի համաձայն:

89Ա. Ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների պորտֆելի մի մասի՝ տոկոսադրույքի ռիսկին ենթակարկվածության համար իրական արժեքի հեջի դեպքում (և միայն նման հեջի դեպքում) 89(բ) պարագրաֆի պահանջները կարող են բավարարվել՝ հեջավորված հոդվածին վերագրելի օգուտը կամ կորուստը ներկայացնելով՝

ա) ակտիվների մեջ մեկ առանձին տողային հոդված՝ վերագնորոշման այն ժամանակահատվածների համար, որոնց ընթացքում հեջավորված հոդվածն ակտիվ է, կամ

բ) պարտավորությունների մեջ մեկ առանձին տողային հոդված՝ վերագնորոշման այն ժամանակահատվածների համար, որոնց ընթացքում հեջավորված հոդվածը պարտավորություն է:

Վերևում՝ (ա) և (բ) կետերում նշված առանձին տողային հոդվածները պետք է ներկայացվեն ֆինանսական ակտիվներից կամ ֆինանսական պարտավորություններից անմիջապես հետո: Նշված տողային հոդվածներում ներառված գումարները պետք է հանվեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, երբ ապաճանաչվեն այն ակտիվները կամ պարտավորությունները, որոնց դրանք վերաբերում են:

90. Եթե հեջավորվում են հեջավորված հոդվածին վերագրելի միայն որոշակի ռիսկեր, ապա հեջավորված հոդվածի իրական արժեքի ճանաչվող փոփոխությունները, որոնք չեն առնչվում հեջավորված ռիսկի հետ, ճանաչվում են ՖՀՄՍ 9-ի 5.7.1-րդ պարագրաֆում նշվածի համաձայն:

**91. Կազմակերպությունը պետք է առաջընթաց կիրառմամբ դադարեցնի պարագրաֆ 89-ով նախորոշված հեջի հաշվառումը, եթե՝**

**ա) հեջավորման գործիքի ժամկետը լրանում է, կամ այն վաճառվում, դադարեցվում կամ իրագործվում է: Այս նպատակով, հեջավորման գործիքի փոխարինումը կամ վերաձևակերպումը մեկ այլ հեջավորման գործիքի չի դիտվում որպես ժամկետի լրացում կամ դադարեցում, եթե նման փոխարինումը կամ վերաձևակերպումը կազմակերպության փաստաթղթավորված հեջավորման ռազմավարության մասն է կազմում: Բացի այդ, այս առումով հեջավորման գործիքը չի համարվի՝ որպես ժամկետը լրացած կամ դադարեցված, եթե՝**

**(i) գործող կամ նոր ընդունված օրենքների կամ այլ իրավական ակտերի արդյունքում հեջավորման գործիքի կողմերը համաձայնում են, որ քլիրինգի մեկ կամ ավելի կոնտրագենտ փոխարինում են քլիրինգի սկզբնական կոնտրագենտներին՝ դառնալով նոր կոնտրագենտ կողմերից յուրաքանչյուրի համար: Այս առումով քլիրինգի կոնտրագենտի ներքո հասկացվում է կենտրոնական կոնտրագենտը (երբեմն կոչվում է «քլիրինգային կազմակերպություն» կամ «քլիրինգային գործակալություն») կամ կազմակերպությունը կամ կազմակերպությունները, օրինակ՝ քլիրինգային կազմակերպության քլիրինգային անդամը կամ քլիրինգային կազմակերպության քլիրինգային անդամի հաճախորդը, որոնք գործում են որպես կոնտրագենտ կենտրոնական կոնտրագենտի կողմից քլրինգն իրականացնելու նպատակով: Այնուամենայնիվ, եթե հեջավորման գործիքի կողմերը փոխարինում են իրենց սկզբնական կոնտրագենտներին այլ կոնտրագենտներով, սույն պարագրաֆը կիրառելի է դառնում, եթե այդ կողմերից յուրաքանչյուրը քլիրինգ է իրականացնում միևնույն կենտրոնական կոնտրագենտի հետ,**

**(ii) հեջավորման գործիքի այլ փոփոխությունները, եթե այդպիսիք կան, սահմանափկվում են այնպիսի փոփոխություններով, որոնք անհրաժեշտ են կոնտրագենտի նման փոխարինումը իրագործելու համար: Այդպիսի փոփոխությունները սահմանափակվում են նրանցով, որոնք համահունչ են այն պայմաններին, որոնք կանկալվեին, եթե հեջավորման գործիքի քլիրինգը սկզբնապես նախատեսված լիներ քլիրինգի կոնտրագենտի կողմից: Նման փոփոխությունները ներառում են գրավի պահանջներին, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մնացորդների**

հաշվանցման իրավունքներին և գանձվող վճարներին վերաբերող փոփոխությունները,

բ) տվյալ հեջը այլևս չի բավարարում հեջի հաշվառման պահանջների կիրառման վերաբերյալ պարագրաֆ 88-ում նշված չափանիշներին, կամ

գ) կազմակերպությունը չեղյալ է համարում հեջի նախորոշումը:

92. Հեջավորված ֆինանսական գործիքի հաշվեկշռային արժեքի 89(բ) պարագրաֆից բխող ցանկացած ճշգրտում, որի համար կիրառվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը (կամ տոկոսադրույքի ռիսկի պորտֆելային հեջի դեպքում՝ պարագրաֆ 89Ա-ում նկարագրված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության առանձին տողային հոդվածի ցանկացած ճշգրտում) պետք է ամորտիզացվի շահույթում կամ վնասում: Ամորտիզացիան կարող է սկսվել այն պահից, երբ առկա է ճշգրտում, բայց ոչ ուշ, քան երբ դադարեցվում է հեջավորված հոդվածի ճշգրտումը՝ հեջավորվող ռիսկին վերագրելի իր իրական արժեքի փոփոխությունների մասով: Ճշգրտումը հիմնվում է ամորտիզացիան սկսելու ամսաթվի դրությամբ վերահաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի վրա: Սակայն ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների տոկոսադրույքի ռիսկին ենթակարկվածության համար իրական արժեքի հեջի դեպքում (և միայն նման հեջի դեպքում), եթե վերահաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի վրա հիմնված ամորտիզացիան իրագործելի չէ, ճշգրտումը պետք է ամորտիզացվի գծային մեթոդով: Ճշգրտման գումարը պետք է ամորտիզացվի ամբողջովին մինչև ֆինանսական գործիքի մարման ժամկետը, կամ պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի հեջավորման դեպքում՝ մինչև համապատասխան վերագնորոշման ժամանակահատվածի ավարտը:

93. Երբ չճանաչված կայուն հանձնառությունը նախորոշվում է որպես հեջավորված հոդված, հեջավորված ռիսկին վերագրելի՝ կայուն հանձնառության իրական արժեքի հետագա կուտակային փոփոխությունը ճանաչվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, իսկ դրա համապատասխան օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում (տե՛ս 89(բ) պարագրաֆը): Հեջավորման գործիքի իրական արժեքի փոփոխությունները ևս ճանաչվում են շահույթում կամ վնասում:

94. Երբ կազմակերպությունը ակտիվ ձեռք բերելու կամ պարտավորություն ստանձնելու կայուն հանձնառության մեջ է մտնում, որը իրենից ներկայացնում է իրական արժեքի հեջի ներքո հեջավորված հոդված, ակտիվի կամ պարտավորության սկզբնական հաշվեկշռային արժեքը, որը ստացվում է կազմակերպության կողմից կայուն հանձնառության կատարման արդյունքում, ճշգրտվում է՝ ներառելու համար հեջավորված ռիսկին վերագրելի կայուն հանձնառության իրական արժեքի կուտակային փոփոխությունը, որը ճանաչվել էր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

## Դրամական հոսքերի հեջեր

**95. Եթե դրամական հոսքերի հեջը ժամանակաշրջանի ընթացքում բավարարում է պարագրաֆ 88-ի պայմաններին, այն պետք է հաշվառվի հետևյալ կերպ՝**

**ա) հեջավորման գործիքի օգուտի կամ կորստի այն մասը, որը որոշված է որպես արդյունավետ հեջ (տե՛ս պարագրաֆ 88) պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, և**

**բ) հեջավորման գործիքի օգուտի կամ կորստի ոչ արդյունավետ մասը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:**

96. Ավելի ստույգ, դրամական հոսքերի հեջը հաշվառվում է հետևյալ կերպ՝

ա) սեփական կապիտալի առանձին բաղադրիչը, որը կապված է հեջավորված հոդվածի հետ, ճշգրտվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնի չափով (բացարձակ մեծություններով)՝

(i) հեջի սկզբից հեջավորման գործիքի գծով կուտակված օգուտը կամ կորուստը, և

(ii) հեջի սկզբից հեջավորված գործիքից ակնկալվող ապագա դրամական հոսքերի իրական արժեքի (ներկա արժեքի) կուտակային փոփոխությունը,

բ) հեջավորման գործիքի կամ դրա որևէ նախորոշված բաղադրիչի գծով ցանկացած այլ մնացորդային օգուտ կամ կորուստ (որն արդյունավետ հեջ չէ) ճանաչվում է շահույթում կամ վնասում, և

գ) եթե կազմակերպության ռիսկերի կառավարման փաստաթղթավորված ռազմավարությամբ տվյալ հեջավորման փոխհարաբերության համար հեջի արդյունավետության գնահատումից բացառվում է հեջավորման գործիքի գծով օգուտի կամ կորստի, կամ դրամական համապատասխան հոսքերի որոշակի բաղադրիչ (տե՛ս 74-րդ, 75-րդ և 88(ա) պարագրաֆները), ապա օգուտի կամ կորստի այդ բացառվող բաղադրիչը ճանաչվում է ՖՀՄՍ 9 5.7.1-րդ պարագրաֆի համաձայն:

**97. Եթե կանխատեսված գործարքի հեջը հետագայում հանգեցնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ճանաչման, ապա դրա հետ կապված օգուտները կամ վնասները, որոնք ճանաչվել էին այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ համաձայն պարագրաֆ 95-ի, պետք է վերադասակարգվեն՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում (տե՛ս ՀՀՄՍ 1 (2007 թվականին վերանայված տարբերակը)) այն նույն ժամանակաշրջանում կամ ժամանակաշրջաններում, որոնցում հեջավորված կանխատեսված դրամական հոսքերը ազդում են շահույթի կամ վնասի վրա (օրինակ, այն ժամանակաշրջաններում, երբ ճանաչվում է տոկոսային եկամուտը կամ տոկոսային ծախսը): Սակայն, եթե կազմակերպությունը ակնկալում է, որ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված վնասը ամբողջությամբ**

կամ մասամբ չի փոխհատուցվի մեկ կամ մի քանի ապագա ժամանակաշրջանների ընթացքում, ապա այն գումարը, որն ըստ ակնկալիքների չի փոխհատուցվելու, կազմակերպությունը պետք է վերադասակարգի՝ այն ներառելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում:

98. Եթե կանխատեսված գործարքի հեջը հետագայում հանգեցնում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ճանաչման, կամ ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության գծով կանխատեսված գործարքը դառնում է կայուն հանձնառություն, որի համար կիրառվում է իրական արժեքի հեջի հաշվառում, ապա կազմակերպությունը պետք է որդեգրի ներքոնշյալ (ա) կամ (բ) կետերում շարադրված մոտեցումներից որևէ մեկը՝

ա) այն վերադասակարգում է համապատասխան օգուտները կամ վնասները, որոնք ճանաչվել էին այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ համաձայն պարագրաֆ 95-ի՝ ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում (տե՛ս ՀՀՄՍ 1 (2007 թվականին վերանայված տարբերակը)) այն նույն ժամանակաշրջանում կամ ժամանակաշրջաններում, որոնցում ձեռք բերված ակտիվը կամ ստանձնած պարտավորությունը ազդում են շահույթի կամ վնասի վրա (օրինակ՝ այն ժամանակաշրջաններում, երբ ճանաչվում է մաշվածության գծով ծախսը կամ վաճառքի ինքնարժեքը): Սակայն, եթե կազմակերպությունը ակնկալում է, որ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված վնասը ամբողջությամբ կամ մասամբ չի փոխհատուցվի մեկ կամ մի քանի ապագա ժամանակաշրջանների ընթացքում, ապա այն գումարը, որն ըստ ակնկալիքների չի փոխհատուցվելու, կազմակերպությունը պետք է վերադասակարգի՝ այն դուրս բերելով սեփական կապիտալից և ներառելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում,

բ) այն դուրս է բերում համապատասխան օգուտները կամ վնասները, որոնք ճանաչվել էին այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ համաձայն պարագրաֆ 95-ի, և ներառում է դրանք ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքի կամ այլ հաշվեկշռային արժեքի մեջ:

99. Կազմակերպությունը 98(ա) կամ (բ) պարագրաֆներում շարադրված մոտեցումներից որևէ մեկը պետք է որդեգրի որպես հաշվապահական հաշվառման քաղաքականություն և հետևողականորեն կիրառի այն բոլոր այն հեջերի նկատմամբ, որոնց վերաբերում է պարագրաֆ 98-ը:

100. Դրամական հոսքերի հեջերի դեպքում, բացառությամբ 97-րդ և 98-րդ պարագրաֆներում քննարկվածների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարները պետք է վերադասակարգվեն՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում (տե՛ս ՀՀՄՍ 1 (2007 թվականին վերանայված տարբերակը)) այն նույն

ժամանակաշրջանում կամ ժամանակաշրջաններում, որոնցում հեջավորված կանխատեսված դրամական հոսքերն ազդում են շահույթի կամ վնասի վրա (օրինակ՝ երբ տեղի է ունենում կանխատեսված վաճառք):

101. Հետևյալ հանգամանքներից ցանկացածի դեպքում կազմակերպությունը առաջընթաց կիրառմամբ պետք է դադարեցնի 95-100-րդ պարագրաֆներով նախորոշված հեջի հաշվառումը՝

ա) հեջավորման գործիքի ժամկետը լրանում է, կամ այն վաճառվում, դադարեցվում կամ իրագործվում է: Այս դեպքում հեջավորման գործիքի գծով կուտակված օգուտը կամ կորուստը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում հեջի արդյունավետ լինելու ժամանակաշրջանից սկսած (տե՛ս 95(ա) պարագրաֆը), պետք է շարունակվի առանձին արտացոլվել սեփական կապիտալում մինչև կանխատեսված գործարքի տեղի ունենալը: Երբ այդ գործարքը տեղի է ունենում, կիրառվում են 97, 98 կամ 100 պարագրաֆները: Սույն ենթապարագաֆի առումով հեջավորման գործիքի փոխարինումը կամ վերաձևակերպումը մեկ այլ հեջավորման գործիքի չի դիտվում որպես ժամկետի լրացում կամ դադարեցում, եթե նման փոխարինումը կամ վերաձևակերպումը կազմակերպության փաստաթղթավորված հեջավորման ռազմավարության մասն է կազմում: Բացի այդ, սույն ենթապարագրաֆի առումով հեջավորման գործիքը չի համարվի ժամկետը լրացած կամ դադարեցված, եթե՝

(i) գործող կամ նոր ընդունված օրենքների կամ այլ իրավական ակտերի արդյունքում հեջավորման գործիքի կողմերը համաձայնում են, որ քլիրինգի մեկ կամ ավելի կոնտրագենտ փոխարինում են քլիրինգի սկզբնական կոնտրագենտներին՝ դառնալով նոր կոնտրագենտ կողմերից յուրաքանչյուրի համար: Այս առումով քլիրինգի կոնտրագենտի ներքո հասկացվում է կենտրոնական կոնտրագենտը (երբեմն կոչվում է «քլիրինգային կազմակերպություն» կամ «քլիրինգային գործակալություն») կամ կազմակերպությունը կամ կազմակերպությունները, օրինակ՝ քլիրինգային կազմակերպության քլիրինգային անդամը կամ քլիրինգային կազմակերպության քլիրինգային անդամի հաճախորդը, որոնք գործում են՝ որպես կոնտրագենտ կենտրոնական կոնտրագենտի կողմից քլրինգն իրականացնելու նպատակով: Այնուամենայնիվ, եթե հեջավորման գործիքի կողմերը փոխարինում են իրենց սկզբնական կոնտրագենտերին այլ կոնտրագենտներով սույն պարագրաֆը կիրառելի է դառնում, եթե այդ կողմերից յուրաքանչյուրը քլիրինգ է իրականացնում միևնույն կենտրոնական կոնտրագենտի հետ,

(ii) հեջավորման գործիքի այլ փոփոխությունները, եթե այդպիսիք կան, սահմանափկվում են այնպիսի փոփոխություններով, որոնք անհրաժեշտ են կոնտրագենտի նման փոխարինումը իրագործելու համար: Այդպիսի

փոփոխությունները սահմանափակվում են նրանցով, որոնք համահունչ են այն պայմաններին, որոնք կանկալվեին, եթե հեջավորման գործիքի քլիրինգը սկզբնապես նախատեսված լիներ քլիրինգի կոնտրագենտի: Նման փոփոխությունները ներառում են գրավի պահանջներին, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մնացորդների հաշվանցման իրավունքներին և գանձվող վճարներին վերաբերող փոփոխությունները,

բ) տվյալ հեջը այլևս չի բավարարում հեջի հաշվառման կիրառման վերաբերյալ պարագրաֆ 88-ում նշված չափանիշներին: Այս դեպքում հեջավորման գործիքի գծով կուտակված օգուտը կամ կորուստը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում հեջի արդյունավետ լինելու ժամանակաշրջանից սկսած (տե՛ս 95(ա) պարագրաֆը), պետք է շարունակվի առանձին արտացոլվել սեփական կապիտալում մինչև կանխատեսված գործարքի տեղի ունենալը: Երբ այդ գործարքը տեղի է ունենում, կիրառվում են 97, 98 կամ 100 պարագրաֆները,

գ) այլևս չի ակնկալվում, որ կանխատեսված գործարքը տեղի կունենա, որի դեպքում հեջավորման գործիքի գծով համապատասխան կուտակված օգուտը կամ կորուստը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում հեջի արդյունավետ լինելու ժամանակաշրջանից սկսած (տե՛ս 95(ա) պարագրաֆը) պետք է վերադասակարգվի՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում: Կանխատեսված գործարքի տեղի ունենալը, որն այլևս մեծապես հավանական չէ (տե՛ս 88(գ) պարագրաֆը), այնուամենայնիվ, դեռևս կարող է ակնկալվել,

դ) կազմակերպությունը չեղյալ է համարում նախորոշումը: Կանխատեսված գործարքի հեջավորման դեպքում հեջավորման գործիքի գծով համապատասխան կուտակված օգուտը կամ կորուստը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում հեջի արդյունավետ լինելու ժամանակաշրջանից սկսած (տե՛ս 95(ա) պարագրաֆը), պետք է շարունակվի առանձին արտացոլվել սեփական կապիտալում մինչև կանխատեսված գործարքի տեղի ունենալը կամ մինչև այն պահը, երբ դրա տեղի ունենալն այլևս չի ակնկալվում: Երբ գործարքը տեղի է ունենում, կիրառվում են 97-րդ, 98-րդ կամ 100-րդ պարագրաֆները: Եթե գործարքի տեղի ունենալն այլևս չի ակնկալվում, կուտակված օգուտը կամ կորուստը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, պետք է վերադասակարգվի՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում:

Զուտ ներդրման հեջեր

**102. Արտերկրյա ստորաբաժանման մեջ զուտ ներդրման հեջերը՝ ներառյալ դրամային հոդվածի հեջը, որը հաշվառվում է որպես զուտ ներդրման մի մաս (տե՛ս ՀՀՄՍ 21), պետք է հաշվառվեն դրամական հոսքերի հեջերի հաշվառմանը համանման՝**

**ա) հեջավորման գործիքի օգուտի կամ վնասի այն մասը, որը որոշված է որպես արդյունավետ հեջ (տե՛ս պարագրաֆ 88), պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, և**

**բ) անարդյունավետ մասը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:**

**Հեջի արդյունավետ մասին վերաբերող հեջավորման գործիքի գծով օգուտը կամ կորուստը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, պետք է վերադասակարգվի՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում (տե՛ս ՀՀՄՍ 1 (2007 թվականին վերանայված տարբերակը)), համաձայն ՀՀՄՍ 21-ի 48-49-րդ պարագրաֆների, արտերկրյա ստորաբաժանման օտարման կամ մասնակի օտարման ժամանակ:**

## Ուժի մեջ մտնելը և անցումային դրույթներ

103. Կազմակերպությունը պետք է կիրառի սույն ստանդարտը (ներառյալ 2004 թվականի մարտին հրապարակված փոփոխությունները) 2005 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառությունը թույլատրվում է: Կազմակերպությունը չպետք է կիրառի սույն ստանդարտը (ներառյալ 2004 թվականի մարտին հրապարակված փոփոխությունները) մինչև 2005 թվականի հունվարի 1-ը սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, եթե միայն չի կիրառում նաև ՀՀՄՍ 32-ը (հրապարակված 2003 թվականի դեկտեմբերին): Եթե կազմակերպությունը կիրառում է այս ստանդարտը մինչև 2005 թվականի հունվարի 1-ը սկսվող ժամանակաշրջանի համար, այն պետք է բացահայտի այդ փաստը:

103Ա. Կազմակերպությունը պետք է կիրառի 2(ժ) պարագրաֆի փոփոխությունը 2006 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը կիրառում է «*Ապագործարկման, վերակառուցման և շրջակա միջավայրի վերականգնման ֆոնդերում մասնակցության իրավունքը*» ՖՀՄՍՄԿ 5 մեկնաբանությունն ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա այս փոփոխությունը պետք է կիրառվի այդ վաղ ժամանակաշրջանի համար:

103Բ. [Հանված է]

103Գ. ՀՀՄՍ 1-ը (2007 թվականին վերանայված տարբերակը) փոփոխեց ՖՀՄՍ-ներում օգտագործվող տերմինաբանությունը: Բացի այդ, այն փոփոխեց 95(ա), 97-րդ, 98-րդ, 100-րդ, 102-րդ, 108-րդ և ԿՈՒ99Բ պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կիրառի այդ փոփոխությունները 2009 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը կիրառում է ՀՀՄՍ 1-ը (2007 թվականին փոփոխված տարբերակը) ավելի վաղ ժամանակաշրջանի համար, այս փոփոխությունները պետք է կիրառվեն այդ ավելի վաղ ժամանակաշրջանի համար:

103Դ. [Հանված է]

103Ե. ՀՀՄՍ 27-ը (2008 թվականին փոփոխված տարբերակը) փոփոխեց պարագրաֆ 102-ը: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունը 2009 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը կիրառում է ՀՀՄՍ 27-ը (2008 թվականին փոփոխված տարբերակը) ավելի վաղ ժամանակաշրջանի համար, այն պետք է կիրառի այս փոփոխությունը այդ ավելի վաղ ժամանակաշրջանի համար:

103Զ. [Հանված է]

103Է. Կազմակերպությունը պետք է կիրառի ԿՈՒ99ԲԱ, ԿՈՒ99Ե, ԿՈՒ99Զ, ԿՈՒ110Ա և ԿՈՒ110Բ պարագրաֆները հետընթաց 2009 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար «*Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*» ՀՀՄՍ 8-ի համաձայն: Ավելի վաղ կիրառությունը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է *Որակավորվող հեջավորված հոդվածները* (փոփոխություն ՀՀՄՍ 39-ում) մինչև 2009 թվականի հուլիսի 1-ը սկսվող ժամանակաշրջանների համար, ապա այն պետք է բացահայտի այդ փաստը:

103Ը-103Ժ. [Հանված է}

103ԺԱ. 2009 թվականի ապրիլին հրապարակված *«ՖՀՄՍ-ների բարելավումներ» փաստաթուղթը* փոփոխել է 2(է), 97-րդ և 100-րդ պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի պարագրաֆների այդ փոփոխությունները առաջընթաց՝ բոլոր չլուծված պայմանագրերի նկատմամբ 2010 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառությունը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է փոփոխությունն ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա պետք է բացահայտի այդ փաստը:

103ԺԲ - 103ԺԶ. [հանված է]

103ԺԷ. 2011 թվականի մայիսին հրապարակված ՖՀՄՍ 13-ը փոխել է 9-րդ, 13-րդ, 28-րդ, 47-րդ, 88-րդ, ԿՈՒ46, ԿՈՒ52, ԿՈՒ64, ԿՈՒ76, ԿՈՒ76Ա, ԿՈՒ80, ԿՈՒ81 և ԿՈՒ96 պարագրաֆները, ավելացրել է 43Ա պարագրաֆը և հանել է 48-49-րդ, ԿՈՒ69-ԿՈՒ75, ԿՈՒ77-ԿՈՒ79 և ԿՈՒ82 պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները, երբ կիրառում է ՖՀՄՍ 13-ը:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

103ԺԸ.2012 թվականի հոկտեմբերին հրապարակված *«Ներդրումային կազմակերպություններ»* (փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում, ՖՀՄՍ 12-ում և ՀՀՄՍ 27-ում) փաստաթուղթը փոփոխել է 2-րդ և 80-րդ պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոոխությունները 2014 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: *«Ներդրումային կազմակերպություններ»* փաստաթղթի վաղաժամ կիրառությունը թույլատրելի է: Եթե կազմակերպությունը վաղաժամ կիրառում է այդ փոփոխությունները, այն նաև պետք է միաժամանակ կիրառի *«Ներդրումային կազմակերպություններ»* փաստաթղթում ներառված բոլոր փոփոխությունները:

103ԺԹ. [Հանված է]

103Ի. 2014 թվականի մայիսին հրապարակված *«Գնորդների հետ պայմանագրերից հասույթ»* ՖՀՄՍ 15-ը փոփոխել է 2-րդ, 9-րդ, 43-րդ, 47-րդ, 55-րդ, ԿՈՒ2, ԿՈՒ4 և ԿՈՒ48 պարագրաֆները և ավելացրել է 2Ա, 44Ա, 55Ա և ԿՈՒ8Ա-ԿՈՒ8Գ պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները, երբ կիրառում է ՖՀՄՍ 15-ը:

103ԻԱ.2014 թվականի հուլիսին հրապարակված ՖՀՄՍ 9-ը փոփոխել է 2-րդ, 8-րդ, 9-րդ, 71-րդ, 88-90-րդ, 96-րդ, ԿՈՒ95, ԿՈՒ114, ԿՈՒ118 պարագրաֆները և ԿՈՒ133 պարագրաֆին նախորդող վերնագրերը, և հանվել են 1-ին, 4-7-րդ, 10-70-րդ, 79-րդ, 103Բ, 103Դ, 103Զ, 103Ը-103Ժ, 103ԺԲ-103ԺԶ, 103ԺԹ, 105-107Ա, 108Ե-108Զ, ԿՈՒ1-ԿՈՒ93 և ԿՈՒ96 պարագրաֆները: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները, երբ կիրառում է ՖՀՄՍ 9-ը:

103ԻԲ. *[Սույն պարագրաֆը ավելացել է այն կազմակերպության համար, որը չի որդեգրել ՖՀՄՍ 9-ը:]*

104. Սույն ստանդարտը պետք է կիրառվի հետընթաց, բացառությամբ 108-րդ պարագրաֆներում սահմանված դեպքերի: Ներկայացված ամենավաղ նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը և համադրելի բոլոր այլ գումարները պետք է ճշգրտվեն այնպես, կարծես այս ստանդարտը միշտ գործածության մեջ է եղել, բացառությամբ, եթե տեղեկատվության վերաներկայացումն անիրագործելի է: Եթե վերաներկայացումն անիրագործելի է, կազմակերպությունը պետք է բացահայտի այդ փաստը և նշի, թե ինչ չափով է վերաներկայացվել տեղեկատվությունը:

105–107Ա. [Հանված է]

108. Կազմակերպությունը չպետք է ճշգրտի ոչ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքը՝ բացառելու համար դրամական հոսքերի հեջերի հետ կապված օգուտները և վնասները, որոնք ներառվել էին հաշվեկշռային արժեքի մեջ մինչև այն ֆինանսական տարվա սկիզբը, որում առաջին անգամ կիրառվում է սույն ստանդարտը: Այն ֆինանսական ժամանակաշրջանի սկզբում, որում առաջին անգամ կիրառվում է սույն ստանդարտը,

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

կայուն հանձնառության հեջի գծով շահույթից կամ վնասից դուրս (այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում) ճանաչված ցանկացած գումար, որն ըստ այս ստանդարտի հաշվառվում է որպես իրական արժեքի հեջ, պետք է վերադասակարգվի որպես ակտիվ կամ պարտավորություն, բացառությամբ արտարժութային ռիսկի հեջի, որը շարունակում է համարվել դրամական հոսքերի հեջ:

108Ա. Կազմակերպությունը պետք է կիրառի պարագրաֆ 80-ի վերջին նախադասությունը և ԿՈՒ99Ա և ԿՈՒ99Բ պարագրաֆները 2006 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառությունը խրախուսվում է: Եթե կազմակերպությունը նախորոշել է որպես հեջավորված հոդված արտաքին կանխատեսվող գործարք, որը՝

ա) արտահայտված է գործարքի մեջ մտնող կազմակերպության ֆունկցիոնալ արժույթով,

բ) առաջացնում է ռիսկ, որը ազդեցություն կունենա համախմբված շահույթի կամ վնասի վրա (այսինքն՝ արտահայտված է խմբի ներկայացման արժույթից տարբեր արժույթով), և

գ) կորակվեր որպես հեջի հաշվառման ենթակա, եթե արտահայտված չլիներ այդ գործարքի մեջ մտնող կազմակերպության ֆունկցիոնալ արժույթով.

այն կարող է կիրառել հեջի հաշվապահական հաշվառում համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ մինչև պարագրաֆ 80-ի վերջին նախադասության և ԿՈՒ99Ա և ԿՈՒ99Բ պարագրաֆների կիրառման ամսաթիվն ընկած ժամանակաշրջան(ներ)ում:

108Բ. Կազմակերպությունը կարող է չկիրառել ԿՈՒ99Բ պարագրաֆը մինչև պարագրաֆ 80-ի վերջին նախադասության և ԿՈՒ99Ա պարագրաֆի կիրառման ամսաթիվն ընկած ժամանակաշրջաններին վերաբերող համադրելի տեղեկատվության նկատմամբ:

108Գ. 73-րդ և ԿՈՒ8 պարագրաֆները փոփոխվել են, 2008 թվականի մայիսին հրապարակված *«ՖՀՄՍ-ների բարելավումներ»* փաստաթղթով: Պարագրաֆ 80-ը փոխվել է 2009 թվականի ապրիլին հրապարակված «*ՖՀՄՍ-ների բարելավումներով*»: Կազմակերպությունը պետք է այդ փոփոխությունները կիրառի 2009 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Բոլոր փոփոխությունների ավելի վաղ կիրառությունը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է փոոխություններն ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա պետք է բացահայտի այդ փաստը:

108Դ. 2013 թվականի հունիսին հրապարակված *«Ածանցյալ գործիքների նորացում և հեջերի հաշվառման շարունակում»* (փոփոխություններ ՀՀՄՍ 39-ում) *փաստաթուղթը* փոփոխել է 91-րդ և 101-րդ պարագրաֆները և ավելացրել է ԿՈՒ113Ա պարագրաֆը: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ պարագրաֆները 2014 թվականի հունվարի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունները հետընթաց *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»* ՀՀՄՍ 8-ի համաձայն: Ավելի վաղ կիարռությունը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է փոոխություններն ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա պետք է բացահայտի այդ փաստը:

108Ե–108Զ. [Հանված է]

## Այլ ՖՀՄՍ-ների գործողությունների դադարեցումը

109. Սույն ստանդարտը փոխարինում է «*Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը»* ՀՀՄՍ 39 -ի 2000 թվականի հոկտեմբերին վերանայված տարբերակը:

110. Սույն ստանդարտը և դրան կից Ներդրման Ուղեցույցը փոխարինում են նախկին ՀՀՄՄԿ-ի կողմից ձևավորված ՀՀՄՍ 39 Ներդրման Ուղեցույցների Կոմիտեի թողարկած Ներդրման Ուղեցույցը:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

# Հավելված Ա

# Կիրառման ուղեցույց

*Այս հավելվածը սույն ստանդարտի անբաժանելի մասն է:*

ԿՈՒ1-ԿՈՒ93. [Հանված է]

## Հեջավորում (71-102 պարագրաֆներ)

### Հեջավորման գործիքներ (72-77 պարագրաֆներ)

#### Գործիքների որակումը (72 և 73 պարագրաֆներ)

ԿՈՒ94. Կազմակերպության կողմից տրված օպցիոնի գծով պոտենցիալ վնասը կարող է նշանակալիորեն ավելի մեծ լինել, քան առնչվող հեջավորված հոդվածի արժեքի գծով պոտենցիալ օգուտը: Այլ խոսքերով, տրված օպցիոնը արդյունավետ չէ՝ հեջավորված հոդվածի գծով շահույթի կամ վնասի ռիսկին ենթարկվածությունը նվազեցնելու համար: Այդ պատճառով, տրված օպցիոնը չի որակվում որպես հեջավորման գործիք, բացառությամբ այն դեպքի, երբ այն նախորոշված է ձեռք բերված օպցիոնի չեզոքացման համար, ներառյալ մեկ այլ ֆինանսական գործիքում պարունակվող օպցիոնը (օրինակ, տրված գնման օպցիոն, որն օգտագործվում է հետգնման իրավունքով պարտավորության հեջի համար): Ի տարբերություն, ձեռք բերված օպցիոնի գծով պոտենցիալ օգուտները հավասար են կամ ավելի մեծ են, քան վնասները, և, հետևաբար, ունեն իրական արժեքի կամ դրամական հոսքերի փոփոխություններից շահույթի կամ վնասի ռիսկին ենթարկվածությունը նվազեցնելու պոտենցիալ: Համապատասխանաբար, այն կարող է որակվել որպես հեջավորման գործիք:

ԿՈՒ95.Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվը կարող է նախորոշվել որպես հեջավորման գործիք արտարժութային ռիսկի հեջի դեպքում:

ԿՈՒ96.[Հանված է]

ԿՈՒ97.Կազմակերպության սեփական բաժնային գործիքները կազմակերպության ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները չեն և, հետևաբար, չեն կարող նախորոշվել որպես հեջավորման գործիք:

### Հեջավորված հոդվածներ (78-84 պարագրաֆներ)

#### Հոդվածների որակումը (78-80 պարագրաֆներ)

ԿՈՒ98.Ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ձեռնարկատիրական գործունեություն ձեռք բերելու կայուն հանձնառությունը չի կարող լինել հեջավորված հոդված, բացառությամբ փոխարժեքային ռիսկի, քանի որ այլ հեջավորման ենթակա

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ռիսկերը չեն կարող հստակորեն որոշակիացվել և չափվել: Այդ այլ ռիսկերը ընդհանուր ձեռնարկատիրական ռիսկեր են:

ԿՈՒ99.Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումը չի կարող լինել հեջավորված հոդված իրական արժեքի հեջում, քանի որ, ըստ բաժնեմասնակցության մեթոդի, ասոցիացված կազմակերպության շահույթի կամ վնասի ներդրողի մասնաբաժինն է ճանաչվում շահույթում կամ վնասում, այլ ոչ թե ներդրման իրական արժեքի փոփոխությունները: Նման պատճառով, համախմբված դուստր կազմակերպությունում ներդրումը չի կարող լինել հեջավորված հոդված իրական արժեքի հեջում, քանի որ համախմբման ժամանակ շահույթում կամ վնասում ճանաչվում է դուստր կազմակերպության շահույթը կամ վնասը, այլ ոչ թե ներդրման իրական արժեքի փոփոխությունները: Արտերկրյա ստորաբաժանման մեջ զուտ ներդրման հեջը տարբերվում է վերոնշյալներից, քանի որ այն արտարժութային ռիսկին ենթարկվածության հեջ է, այլ ոչ թե ներդրման արժեքի փոփոխության իրական արժեքի հեջ:

ԿՈՒ99Ա.Պարագրաֆ 80-ը նշում է, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններում մեծապես հավանական կանխատեսված ներխմբային գործարքի արտարժութային ռիսկը կարող է որակվել որպես հեջավորված հոդված դրամական հոսքերի հեջում, եթե գործարքը սահմանված է գործարքի մեջ մտնող կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով, և արտարժութային ռիսկը կազդի համախմբված շահույթի կամ վնասի վրա: Այս նպատակով՝ «կազմակերպությունը» կարող է լինել մայր կազմակերպություն, դուստր կազմակերպություն, ասոցիացված կազմակերպություն, համատեղ ձեռնարկում կամ մասնաճյուղ: Եթե կանխատեսված ներխմբային գործարքի արտարժութային ռիսկը ազդեցություն չունի համախմբված շահույթի կամ վնասի վրա, այդ ներխմբային գործարքը չի կարող որակվել որպես հեջավորված հոդված: Սովորաբար, դա տեղի է ունենում նույն խմբի անդամների միջև ռոյալթիի վճարումների, տոկոսային վճարումների կամ կառավարչական անձնակազմի վարձատրությունների դեպքում, եթե միայն առկա չէ առնչվող արտաքին գործարք: Սակայն, եթե կանխատեսված ներխմբային գործարքի արտարժութային ռիսկը կազդի համախմբված շահույթի կամ վնասի վրա, այդ ներխմբային գործարքը կարող է որակվել որպես հեջավորված հոդված: Դրա օրինակներից է նույն խմբի անդամների միջև պաշարների կանխատեսված վաճառքները կամ գնումները, եթե տեղի է ունենում այդ պաշարների հետագա վաճառք խմբի նկատմամբ արտաքին կողմին: Նմանապես, հիմնական միջոցների կանխատեսված ներխմբային վաճառքը խմբի այն կազմակերպության կողմից, որն արտադրել է դրանք, խմբի այլ կազմակերպությանը, որն օգտագործելու է այդ հիմնական միջոցները իր գործունեության մեջ, կարող է ազդեցություն ունենալ համախմբված շահույթի կամ վնասի վրա: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, այն պատճառով, որ հիմնական միջոցների գծով գնող կազմակերպությունը մաշվածություն է հաշվարկելու, և հիմնական միջոցների սկզբնապես ճանաչված

գումարը կարող է փոփոխվել, եթե կանխատեսված ներխմբային գործարքն արտահայտված է գնող կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով:

ԿՈՒ99Բ.Եթե կանխատեսված ներխմբային գործարքի հեջը որակվում է որպես հեջի հաշվառման ենթակա, ապա, 95(ա) պարագրաֆի համաձայն, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած օգուտ կամ կորուստ պետք է վերադասակարգվի՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում՝ այն նույն ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, որոնց ընթացքում հեջավորված գործարքի արտարժութային ռիսկը ազդում է համախմբված շահույթի կամ վնասի վրա:

ԿՈՒ99ԲԱ. Կազմակերպությունը հեջավորման փոխհարաբերության մեջ կարող է նախորոշել հեջավորված հոդվածի դրամական հոսքերի կամ իրական արժեքի բոլոր փոփոխությունները: Կազմակերպությունը կարող է նաև նախորոշել հեջավորված հոդվածի դրամական հոսքերի կամ իրական արժեքի փոփոխությունները միայն որոշակի գնից կամ այլ փոփոխականից բարձր կամ ցածր (միակողմանի ռիսկ): Ձեռք բերված օպցիոն հանդիսացող հեջավորման գործիքի ներհատուկ արժեքը (ենթադրելով, որ այն ունի նույն հիմնական պայմաններն, ինչ նախորոշված ռիսկը), բայց ոչ դրա ժամանակային արժեքը, արտացոլում է հեջավորված հոդվածի միակողմանի ռիսկը: Օրինակ, կազմակերպությունը կարող է նախորոշել ապագա դրամական հոսքերի ելքերի փոփոխականությունը կանխատեսված ապրանքի գնման գնի աճի արդյունքում: Այդպիսի իրավիճակում նախորոշվում են միայն որոշակի մակարդակից բարձր գնի աճի արդյունքում առաջացած դրամական հոսքերի կորուստները: Հեջավորված ռիսկը չի ներառում ձեռք բերված օպցիոնի ժամանակային արժեքը, քանի որ ժամանակային արժեքը չի կազմում կանխատեսված գործարքի բաղադրիչ, որն ազդում է շահույթի կամ վնասի վրա (86(բ) պարագրաֆ):

**Ֆինանսական հոդվածների նախորոշումը որպես հեջավորված հոդված (81 և 81Ա պարագրաֆներ)**

ԿՈՒ99Գ.Եթե ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության դրամական հոսքերի մի մասն է նախորոշվում որպես հեջավորված հոդված, ապա այդ նախորոշված մասը պետք է լինի ավելի փոքր, քան այդ ակտիվից կամ պարտավորությունից առաջացած ընդհանուր դրամական հոսքերը: Օրինակ, պարտավորության դեպքում, որի արդյունավետ տոկոսադրույքը փոքր է ԼԻԲՈՐ-ից, կազմակերպությունը չի կարող նախորոշել (ա) պարտավորության մի մասը, որը հավասար է հիմնական գումարի՝ գումարած ԼԻԲՈՐ-ի տոկոսադրույքը և (բ) բացասական մնացորդային մասը: Այնուամենայնիվ, կազմակերպությունը կարող է նախորոշել ամբողջ ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության բոլոր դրամական հոսքերը որպես հեջավորված հոդված և հեջավորել դրանք միայն

մեկ որոշակի ռիսկի դեմ (օրինակ, միայն ԼԻԲՈՐ-ի փոփոխություններին վերագրելի փոփոխությունների դեմ): Օրինակ, ֆինանսական պարտավորության դեպքում, որի արդյունավետ տոկոսադրույքը 100 բազիսային կետով ցածր է ԼԻԲՈՐ-ից, կազմակերպությունը կարող է նախորոշել որպես հեջավորված հոդված ամբողջ պարտավորությունը (այսինքն՝ հիմնական գումարը՝ գումարած տոկոսավճար՝ ԼԻԲՈՐ-ից հանած 100 բազիսային կետ դրույքով) և հեջավորել ամբողջ պարտավորության իրական արժեքի կամ դրամական հոսքերի այն փոփոխությունը, որը վերագրելի է ԼԻԲՈՐ-ի փոփոխություններին: Կազմակերպությունը կարող է ընտրել նաև հեջավորման՝ «մեկը մեկի» գործակցից տարբեր գործակից, հեջի արդյունավետությունը բարելավելու նպատակով, ինչպես նկարագրված է ԿՈՒ100 պարագրաֆում:

ԿՈՒ99Դ.Բացի դրանից, եթե ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքը հեջավորվում է իր սկզբնավորումից որոշ ժամանակ անց, և այդ ընթացքում փոխվում են նաև տոկոսադրույքները, կազմակերպությունը կարող է նախորոշել այն մասը, որը հավասար է ուղենշային տոկոսադրույքին և որը բարձր է հոդվածի գծով վճարվող պայմանագրային տոկոսադրույքից: Կազմակերպությունը կարող է այդպես վարվել, եթե ուղենշային տոկոսադրույքն ավելի ցածր է, քան արդյունավետ տոկոսադրույքը՝ հաշվարկված այն ենթադրության հիման վրա, որ կազմակերպությունը գնել է գործիքն այն օրը, երբ առաջին անգամ նախորոշել է հեջավորված հոդվածը: Օրինակ, ենթադրենք կազմակերպությունը սկզբնավորում է ֆիքսված տոկոսադրույքով 100 ԱՄ արժեքով ֆինանսական ակտիվ, որի արդյունավետ տոկոսադրույքը 6 տոկոս է այն ժամանակ, երբ ԼԻԲՈՐ-ը 4 տոկոս է: Կազմակերպությունը սկսում է հեջավորել այդ ակտիվը որոշ ժամանակ անց, երբ ԼԻԲՈՐ-ն աճել է մինչև 8 տոկոս և ակտիվի իրական արժեքը նվազել է՝ դառնալով 90 ԱՄ: Կազմակերպությունը հաշվարկում է, որ եթե այն գնած լիներ ակտիվն այն օրը, երբ այն առաջին անգամ նախորոշել էր ակտիվը որպես հեջավորված հոդված իր 90 ԱՄ իրական արժեքով, ապա արդյունավետ եկամտաբերությունը կլիներ 9.5 տոկոս: Քանի որ ԼԻԲՈՐ-ը ցածր է այդ արդյունավետ եկամտաբերությունից, ապա կազմակերպությունը կարող է նախորոշել 8 տոկոս ԼԻԲՈՐ-ի մասը, որը բաղկացած է մասամբ պայմանագրային տոկոսային դրամական հոսքերից, և մասամբ ընթացիկ իրական արժեքի (այսինքն՝ 90 ԱՄ-ի) և մարման ժամանակ վճարվելիք գումարի (այսինքն՝ 100 ԱՄ-ի) տարբերությունից:

ԿՈՒ99Ե.Պարագրաֆ 81-ը թույլատրում է կազմակերպությանը նախորոշել ֆինանսական գործիքի ոչ ամբողջ իրական արժեքի փոփոխությունը կամ դրամական հոսքերի փոփոխականությունը: Օրինակ՝

ա) ֆինանսական գործիքի բոլոր դրամական հոսքերը կարող են նախորոշվել այն դրամական հոսքերի կամ իրական արժեքի փոփոխությունների գծով, որոնք վերագրելի են որոշ (բայց ոչ բոլոր) ռիսկերին, կամ

բ) ֆինանսական գործիքի որոշ (բայց ոչ բոլոր) դրամական հոսքեր կարող են նախորոշվել այն դրամական հոսքերի կամ իրական արժեքի

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

փոփոխությունների գծով, որոնք վերագրելի են բոլոր կամ միայն որոշ ռիսկերին (այսինքն, ֆինանսական գործիքի դրամական հոսքերի «մասը» կարող է նախորոշվել բոլոր կամ միայն որոշ ռիսկերին վերագրելի փոփոխությունների գծով):

ԿՈՒ99Զ.Հեջի հաշվառման համար որակավորվելու համար նախորոշված ռիսկերը և ռիսկի մասերը պետք է լինեն ֆինանսական գործիքի առանձին նույնականացվող բաղադրիչներ, և նախորոշված ռիսկերի և ռիսկի մասերի փոփոխություններից առաջացող ամբողջ ֆինանսական գործիքի դրամական հոսքերի կամ իրական արժեքի փոփոխությունները պետք է արժանահավատորեն չափելի լինեն: Օրինակ՝

ա) ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքի դեպքում, որը հեջավորվում է ռիսկից զերծ կամ ուղենշային տոկոսադրույքի փոփոխություններին վերագրելի իրական արժեքի փոփոխությունների դեմ, ռիսկից զերծ կամ ուղենշային դրույքը, սովորաբար, համարվում է ֆինանսական գործիքի առանձին նույնականացվող բաղադրիչ, ինչպես նաև արժանահավատորեն չափելի,

բ) սղաճը առանձին նույնականացվող և արժանահավատորեն չափելի չէ և չի կարող նախորոշվել որպես ֆինանսական գործիքի ռիսկ կամ ռիսկի մաս, եթե միայն բավարարված չեն (գ) կետի պահանջները,

գ) սղաճի հետ կապակցված ճանաչված պարտատոմսի դրամական հոսքերի՝ պայմանագրով սահմանված սղաճի մասը (ենթադրելով, որ պարունակվող ածանցյալ գործիքի առանձին հաշվառման պահանջ առկա չէ) առանձին նույնականացվող և արժանահավատորեն չափելի է, քանի դեռ սղաճի այդ մասը չի ազդում գործիքի այլ դրամական հոսքերի վրա:

## Ոչ ֆինանսական հոդվածների նախորոշումը որպես հեջավորված հոդված (պարագրաֆ 82)

ԿՈՒ100. Ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության բաղկացուցչի կամ բաղադրիչի գնի փոփոխությունը, սովորաբար, չունի կանխատեսելի, առանձին չափելի ազդեցություն հոդվածի գնի վրա, որը համադրելի լինի, օրինակ, պարտատոմսի գնի վրա շուկայական տոկոսադրույքների փոփոխության ազդեցության հետ: Հետևաբար, ոչ ֆինանսական ակտիվը կամ ոչ ֆինանսական պարտավորությունը ներկայացնում է հեջավորված հոդված միայն որպես ամբողջություն, կամ էլ՝ փոխարժեքային ռիսկի համար: Եթե գոյություն ունի հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի պայմանների միջև տարբերություն (օրինակ՝ բրազիլական սուրճի կանխատեսված գնման հեջի նպատակով կոլումբիական սուրճի գնման ֆորվարդային պայմանագրի օգտագործումը, որի մնացած պայմանները համանման են), այդ հեջավորման փոխհարաբերությունը կարող է դեռևս որակվել որպես հեջավորման փոխհարաբերություն, եթե բավարարվում են պարագրաֆ 88-ի բոլոր պայմանները, ներառյալ այն, որ հեջը, ըստ

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ակնկալիքների, մեծապես արդյունավետ կլինի: Այս նպատակով հեջավորման գործիքի գումարը կարող է մեծ կամ փոքր լինել, քան հեջավորված հոդվածինը, եթե դա բարելավում է հեջավորման փոխհարաբերության արդյունավետությունը: Օրինակ, կարող է իրականացվել ռեգրեսիայի վերլուծություն հեջավորված հոդվածի (օրինակ, բրազիլիական սուրճի գործարք) և հեջավորման գործիքի (օրինակ, կոլումբիական սուրճի գործարք) միջև վիճակագրական փոխհարաբերություն հաստատելու համար: Եթե երկու փոփոխականների միջև (այսինքն, բրազիլիական սուրճի և կոլումբիական սուրճի միավորի գների միջև) առկա է հիմնավոր փոխհարաբերություն, ապա ռեգրեսիայի կորի թեքությունը կարող է օգտագործվել հեջի այն հարաբերակցության գործակիցը որոշելու համար, որը կապահովի առավելագույն ակնկալվող արդյունավետություն: Օրինակ, եթե ռեգրեսիայի կորի թեքությունը 1.02 է, ապա հեջավորված հոդվածի 0.98 միավորի և հեջավորման գործիքի 1.00 միավորի վրա հիմնված հեջի հարաբերակցության գործակիցը կապահովի առավելագույն ակնկալվող արդյունավետություն: Այնուամենայնիվ, հեջավորման փոխհարաբերությունը կարող է հանգեցնել անարդյունավետության, որը ճանաչվում է շահույթում կամ վնասում հեջավորման փոխհարաբերության ժամանակահատվածում:

## Հոդվածների խմբի նախորոշումը որպես հեջավորված հոդված (83 և 84 պարագրաֆներ)

ԿՈՒ101.Ընդհանուր զուտ դիրքի հեջը (օրինակ, համանման մարման ժամկետներով ֆիքսված տոկոսադրույքով բոլոր ակտիվների և ֆիքսված տոկոսադրույքով բոլոր պարտավորությունների զուտ դիրքը), ի տարբերություն որոշակի հեջավորված հոդվածի հեջի, չի որակվում որպես հեջի հաշվառման ենթակա: Սակայն, այս տեսակի հեջավորման փոխհարաբերության հեջի հաշվառման գրեթե նույն ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա կարելի է ստանալ՝ որպես հեջավորված հոդված նախորոշելով հիմքում ընկած հոդվածների մի մասը: Օրինակ, եթե բանկն ունի համանման բնույթի ռիսկերով և պայմաններով 100 ԱՄ արժեքով ակտիվներ և 90 ԱՄ արժեքով պարտավորություններ և հեջավորում է 10 ԱՄ զուտ արժեքով ռիսկի ենթարկվածությունը, այն կարող է նախորոշել որպես հեջավորված հոդված այդ ակտիվների 10 ԱՄ արժեքով մասը: Նման նախորոշումը կարող է օգտագործվել, եթե այդպիսի ակտիվները և պարտավորությունները ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ են, որի դեպքում սա իրական արժեքի հեջ է, կամ եթե դրանք փոփոխուն տոկոսադրույքով գործիքներ են, որի դեպքում սա դրամական հոսքերի հեջ է: Նմանապես, եթե կազմակերպությունն ունի 100 ԱՄ արժեքով արտարժույթով գնման կայուն հանձնառություն և 90 ԱՄ արժեքով արտարժույթով վաճառքի կայուն հանձնառություն, ապա այն կարող է հեջավորել 10 ԱՄ արժեքով զուտ գումարը՝ ձեռք բերելով ածանցյալ գործիք և նախորոշելով այն որպես հեջավորման գործիք՝ կապված 100 ԱՄ արժեքով գնման կայուն հանձնառության 10 ԱՄ արժեքով մասի հետ:

## Հեջի հաշվառում (85-102 պարագրաֆներ)

ԿՈՒ102.Իրական արժեքի հեջի օրինակ է, տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, ֆիքսված տոկոսադրույքով պարտքային գործիքի իրական արժեքի փոփոխություններին ենթարկվածության հեջը: Այսպիսի հեջ կարող է իրագործվել թողարկողի կամ տիրապետողի կողմից:

ԿՈՒ103.Դրամական հոսքերի հեջի օրինակ է սվոփի օգտագործումը՝ փոփոխուն տոկոսադրույքով պարտքը ֆիքսված տոկոսադրույքով պարտքով փոխանակելու համար (այսինքն, ապագա գործարքի հեջ, երբ հեջավորման ենթակա ապագա դրամական հոսքերը ապագա տոկոսային վճարումներն են):

ԿՈՒ104.Կայուն հանձնառության հեջը (օրինակ, վառելիքի գնի փոփոխության հեջը՝ կապված էլեկտրակայանի կողմից ֆիքսված գնով վառելիք գնելու չճանաչված պայմանագրային հանձնառության հետ) իրական արժեքի փոփոխության ենթարկվածության հեջ է: Համապատասխանաբար, այսպիսի հեջն իրական արժեքի հեջ է: Սակայն, ըստ պարագրաֆ 87-ի, կայուն հանձնառության արտարժութային ռիսկի հեջը, որպես այլընտրանք, կարող է նաև հաշվառվել որպես դրամական հոսքերի հեջ:

## Հեջի արդյունավետության գնահատում

ԿՈՒ105.Հեջը համարվում է մեծապես արդյունավետ, միայն եթե բավարարվում է հետևյալ երկու պայմաններից յուրաքանչյուրը՝

ա) հեջի սկզբի դրությամբ և հետագա ժամանակաշրջաններում ակնկալվում է, որ հեջը կլինի մեծապես արդյունավետ հեջավորված ռիսկին վերագրելի իրական արժեքի կամ դրամական հոսքերի փոփոխությունները չեզոքացնելու մեջ՝ այն ժամանակաշրջանի ընթացքում, որի համար նախորոշված է հեջը: Այդպիսի ակնկալիքները կարող են ցուցադրվել տարբեր եղանակներով՝ ներառյալ հեջավորված ռիսկին վերագրելի հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ դրամական հոսքերի անցյալ փոփոխությունների համեմատությունը հեջավորման գործիքի իրական արժեքի կամ դրամական հոսքերի անցյալ փոփոխությունների հետ, կամ ցուցադրելով վիճակագրական բարձր կորելյացիան հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ դրամական հոսքերի և հեջավորման գործիքի իրական արժեքի կամ դրամական հոսքերի միջև: Կազմակերպությունը կարող է ընտրել հեջավորման □մեկը մեկի□ գործակցից տարբեր գործակից՝ հեջի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ինչպես նկարագրված է ԿՈՒ100 պարագրաֆում,

բ) հեջի փաստացի արդյունքները տատանվում են 80-ից 125 տոկոսի միջակայքում: Օրինակ, եթե փաստացի արդյունքներն այնպիսին են, որ հեջավորման գործիքի գծով վնասը կազմում է 120 ԱՄ, իսկ դրամային գործիքի գծով օգուտը՝ 100 ԱՄ, ապա չեզոքացման արդյունքը կարող է չափվել 120/100

հարաբերակցությամբ, որը կազմում է 120 տոկոս, կամ 100/120 հարաբերակցությամբ, որը կազմում է 83 տոկոս: Այս օրինակում, ենթադրելով, որ հեջը բավարարում է (ա) կետի պայմանին, կազմակերպությունը կեզրակացներ, որ հեջը մեծապես արդյունավետ է եղել:

ԿՈՒ106.Արդյունավետությունը գնահատվում է առնվազն այն պահին, որի դրությամբ կազմակերպությունը պատրաստում է իր տարեկան կամ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

ԿՈՒ107.Սույն ստանդարտը չի սահմանում հեջի արդյունավետության գնահատման որևէ մի մեթոդ: Կազմակերպության կողմից որդեգրվող հեջի արդյունավետության գնահատման մեթոդը կախված է կազմակերպության ռիսկերի կառավարման ռազմավարությունից: Օրինակ, եթե կազմակերպության ռիսկերի կառավարման ռազմավարությունն է՝ հեջավորված դիրքի փոփոխությունները արտացոլելու համար պարբերաբար ճշգրտել հեջավորման գործիքի գումարը, ապա կազմակերպությունը պետք է ցուցադրի, որ, ըստ ակնկալիքների, հեջը կլինի մեծապես արդյունավետ միայն մինչև հեջավորման գործիքի գումարի հաջորդ ճշգրտումն ընկած ժամանակաշրջանի ընթացքում: Որոշ դեպքերում կազմակերպությունը որդեգրում է տարբեր մեթոդներ հեջերի տարբեր տեսակների համար: Հեջավորման ռազմավարության վերաբերյալ կազմակերպության փաստաթղթավորումը ներառում է արդյունավետության գնահատման ընթացակարգերը: Այդ ընթացակարգերը նշում են, թե արդյոք գնահատումը ներառում է հեջավորման գործիքի գծով ողջ օգուտը կամ կորուստը, թե գործիքի ժամանակային արժեքը բացառվում է:

ԿՈՒ107Ա.Եթե կազմակերպությունը հեջավորում է հոդվածի գծով ռիսկին ենթարկվածության 100 տոկոսից փոքր մասը, օրինակ՝ 85 տոկոսը, ապա այն պետք է նախորոշի հեջավորված հոդվածը ռիսկին ենթարկվածության 85 տոկոսի չափով և պետք է չափի անարդյունավետությունը այդ նախորոշված 85 տոկոսի փոփոխության հիման վրա: Այնուամենայնիվ, հեջավորելով նախորոշված ռիսկին ենթարկվածության 85 տոկոսը՝ կազմակերպությունը կարող է օգտագործել հեջավորման «մեկը մեկի» գործակցից տարբեր գործակից, եթե դա բարելավում է հեջի ակնկալվող արդյունավետությունը, ինչպես նկարագրված է ԿՈՒ100 պարագրաֆում:

ԿՈՒ108.Եթե հեջավորման գործիքի և հեջավորված ակտիվի, պարտավորության, կայուն հանձնառության կամ մեծապես հավանական կանխատեսված գործարքի հիմնական պայմանները նույնն են, ապա հավանական է, որ հեջավորվող ռիսկին վերագրելի իրական արժեքի և դրամական հոսքերի փոփոխությունները կարող են ամբողջությամբ միմյանց չեզոքացնել ինչպես հեջի սկզբի դրությամբ, այնպես էլ հետագայում: Օրինակ, հավանական է, որ տոկոսադրույքի սվոփը լինի արդյունավետ հեջ, եթե հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի նոմինալ և հիմնական գումարները, պայմանները, վերագնորոշման ամսաթվերը, տոկոսավճարների և հիմնական գումարների ստացման և վճարման ամսաթվերը, ինչպես նաև տոկոսադրույքների չափման հիմունքը նույնն են: Նաև, ապրանքի մեծապես

հավանական կանխատեսված գնման հեջը ֆորվարդային պայմանագրի միջոցով հավանական է, որ կլինի մեծապես արդյունավետ, եթե՝

ա) ֆորվարդային պայմանագիրը կնքված է՝ գնելու համար նույն ապրանքի նույն քանակը նույն պահին և վայրում, ինչ որ հեջավորված կանխատեսված գնման դեպքում,

բ) սկզբնական պահին ֆորվարդային պայմանագրի իրական արժեքը հավասար է զրոյի, և

գ) կա՛մ ֆորվարդային պայմանագրի գծով զեղչի կամ պարգևավճարի փոփոխությունը բացառվում է հեջի արդյունավետության գնահատումից և ուղղակիորեն ճանաչվում է շահույթում կամ վնասում, կա՛մ էլ մեծապես հավանական կանխատեսված գործարքի գծով դրամական հոսքերի ակնկալվող փոփոխությունը հիմնված է ապրանքի ֆորվարդային գնի վրա:

ԿՈՒ109.Երբեմն հեջավորման գործիքը չեզոքացնում է հեջավորված ռիսկի միայն մի մասը: Օրինակ, հեջը լիովին արդյունավետ չի լինի, եթե հեջավորման գործիքը և հեջավորված հոդվածն արտահայտված են տարբեր արժույթներով, որոնց փոխարժեքները չեն փոփոխվում փոխկապակցված ձևով: Նմանապես, տոկոսադրույքի ռիսկի հեջը ածանցյալ գործիքի միջոցով չի լինի լիովին արդյունավետ, եթե ածանցյալ գործիքի իրական արժեքի փոփոխության մի մասը վերագրելի է պայմանագրային կողմի պարտքային ռիսկին:

ԿՈՒ110.Որպես հեջի հաշվառման ենթակա որակվելու համար հեջը պետք է վերաբերի որոշակի նույնականացված և նախորոշված ռիսկի, այլ ոչ թե պարզապես կազմակերպության ընդհանուր ձեռնարկատիրական ռիսկերին, և պետք է, ի վերջո, ազդի կազմակերպության շահույթի կամ վնասի վրա: Նյութական ակտիվի բարոյական մաշվածության ռիսկի կամ պետության կողմից գույքի բռնագրավման ռիսկի հեջը չի որակավորվում որպես հեջի հաշվառման պահանջներին բավարարող. դրա արդյունավետությունը հնարավոր չէ չափել, քանի որ նշված ռիսկերը արժանահավատորեն չափելի չեն:

ԿՈՒ110Ա.74(ա) պարագրաֆը թույլատրում է կազմակերպությանը առանձնացնել օպցիոնային պայմանագրի ներհատուկ արժեքը և ժամանակային արժեքը և նախորոշել որպես հեջավորման գործիք օպցիոնային պայմանագրի միայն ներհատուկ արժեքի փոփոխությունը: Այսպիսի նախորոշումը կարող է հանգեցնել այնպիսի հեջավորման փոխհարաբերությանը, որը լիովին արդյունավետ է կանխատեսված գործարքի հեջավորված միակողմանի ռիսկին վերագրելի դրամական հոսքերի փոփոխությունները չեզոքացնելու առումով, եթե կանխատեսված գործարքի և հեջավորման գործիքի հիմնական պայմանները նույնն են:

ԿՈՒ110Բ.Եթե կազմակերպությունը ձեռք բերված օպցիոնը՝ որպես ամբողջություն, նախորոշում է որպես կանխատեսված գործարքից առաջացող միակողմանի ռիսկի հեջավորման գործիք, ապա հեջավորման փոխհարաբերությունը լիովին

արդյունավետ չի լինի: Դրա պատճառն այն է որ օպցիոնի համար վճարված պարգևավճարը ներառում է դրա ժամանակային արժեքը, իսկ, ինչպես նշված է ԿՈՒ99ԲԱ պարագրաֆում, նախորոշված միակողմանի ռիսկը չի ներառում օպցիոնի ժամանակային արժեքը: Հետևաբար, այս իրավիճակում, օպցիոնի գծով վճարված պարգևավճարի ժամանակային արժեքի հետ կապված դրամական հոսքերը և նախորոշված հեջավորված ռիսկին վերաբերող դրամական հոսքերը միմյանց չեն չեզոքացնի:

ԿՈՒ111.Տոկոսադրույքի ռիսկի դեպքում հեջի արդյունավետությունը կարելի է գնահատել՝ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համար պատրաստելով մարման ժամանակացույց, որը ցույց է տալիս յուրաքանչյուր ժամանակահատվածի համար տոկոսադրույքի գծով ռիսկին զուտ ենթարկվածությունը, եթե զուտ ենթարկվածությունը կապված է որոշակի ակտիվի կամ պարտավորության հետ (կամ ակտիվների կամ պարտավորությունների որոշակի խմբի, կամ էլ դրանց որոշակի մասի հետ)՝ առաջացնելով զուտ ենթարկվածություն, և հեջի արդյունավետությունը գնահատվում է նշված ակտիվի կամ պարտավորության նկատմամբ:

ԿՈՒ112.Հեջի արդյունավետությունը գնահատելիս կազմակերպությունը, սովորաբար, հաշվի է առնում փողի ժամանակային արժեքը: Պարտադիր չէ, որ հեջավորված հոդվածի ֆիքսված տոկոսադրույքը ստույգ համապատասխանի որպես իրական արժեքի հեջ նախորոշված սվոփի ֆիքսված տոկոսադրույքին: Պարտադիր չէ նաև, որ տոկոսակիր ակտիվի կամ պարտավորության փոփոխուն տոկոսադրույքը լինի նույնը, ինչ և որպես դրամական հոսքերի հեջ նախորոշված սվոփի փոփոխուն տոկոսադրույքը: Սվոպի իրական արժեքը ստացվում է նրա զուտ մարումներից: Սվոփի գծով ֆիքսված և փոփոխուն դրույքները կարող են փոխվել՝ առանց ազդելու զուտ մարման վրա, եթե երկուսն էլ փոփոխվում են նույն չափով:

ԿՈՒ113.Եթե կազմակերպությունը չի բավարարում հեջի արդյունավետության չափանիշներին, ապա կազմակերպությունը դադարեցնում է հեջի հաշվառումը այն վերջին ամսաթվից, մինչև որը հեջի արդյունավետության չափանիշներին բավարարելը ցուցադրվել է: Սակայն, եթե կազմակերպությունը բացահայտում է դեպք կամ հանգամանքների փոփոխություն, որի պատճառով հեջավորման փոխհարաբերությունը չի բավարարում արդյունավետության չափանիշին և ցուցադրում է, որ հեջը արդյունավետ էր այդ դեպքից կամ հանգամանքների փոփոխությունից առաջ, ապա կազմակերպությունը դադարեցնում է հեջի հաշվառումը այդ դեպքի կամ հանգամանքների փոփոխության ամսաթվից:

ԿՈՒ113Ա.Կասկածներից խուսափելու նպատակով սկզբնական կոնտրագենտին քլիրինգի կոնտրագենտով փոխարինման և դրա հետ կապված՝ 91(ա)(ii) և 101(ա)(ii) պարագրաֆներում նկարագրված փոփոխությունները կատարելու հետևանքները պետք է արտացոլվեն հեջավորման գործիքի չափման մեջ և հետևաբար հեջի արդյունավետության գնահատման և հեջի արդյունավետության չափման մեջ:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

## Իրական արժեքի հեջի հաշվառումը՝ տոկոսադրույքի ռիսկի պորտֆելային հեջի դեպքում

ԿՈՒ114.Ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների պորտֆելի հետ կապված տոկոսադրույքի ռիսկի իրական արժեքի հեջի համար կազմակերպությունը կբավարարի սույն ստանդարտի պահանջներին, եթե համապատասխանի (ա)-(թ)-ում ներկայացված ընթացակարգերին և ներքոնշյալ ԿՈՒ115–ԿՈՒ132 պարագրաֆներին՝

ա) որպես իր ռիսկերի կառավարման գործընթացի մաս, կազմակերպությունն առանձնացնում է այն հոդվածների պորտֆելը, որի տոկոսադրույքի ռիսկն այն ցանկանում է հեջավորել: Պորտֆելը կարող է բաղկացած լինել միայն ակտիվներից, միայն պարտավորություններից կամ և՛ ակտիվներից, և՛ պարտավորություններից: Կազմակերպությունը կարող է առանձնացնել երկու կամ ավելի պորտֆելներ, որի դեպքում այն կիրառում է ներքոնշյալ ուղեցույցը յուրաքանչյուր պորտֆելի նկատմամբ առանձին,

բ) կազմակերպությունը վերլուծում է պորտֆելը ըստ վերագնորոշման ժամանակահատվածների՝ հիմնվելով ակնկալվող, այլ ոչ թե պայմանագրային վերագնորոշման ամսաթվերի վրա: Ըստ վերագնորոշման ժամանակա-հատվածների՝ վերլուծությունը կարող է կատարվել տարբեր եղանակներով, ներառյալ դրամական հոսքերի բաշխումն ըստ այն ժամանակահատվածների, որոնցում դրանք, ըստ ակնկալիքների, տեղի կունենան, կամ անվանական հիմնական գումարների բաշխումն ըստ բոլոր ժամանակահատվածների՝ մինչև վերագնորոշման ակնկալվող տեղի ունենալը,

գ) այս վերլուծության հիման վրա կազմակերպությունը որոշում է այն գումարը, որը ցանկանում է հեջավորել: Կազմակերպությունը առանձնացված պորտֆելից նախորոշում է որպես հեջավորված հոդված ակտիվների կամ պարտավորությունների այն գումարը (և ոչ զուտ գումարը), որը հավասար է այն գումարին, որն այն ցանկանում է նախորոշել որպես հեջավորման ենթակա: Այս գումարը որոշում է նաև այն տոկոսային չափը, որն օգտագործվում է՝ ԿՈՒ126(բ) պարագրաֆի համաձայն արդյունավետությունը ստուգելու համար,

դ) կազմակերպությունը նախորոշում է տոկոսադրույքի ռիսկը, որն այն հեջավորում է: Այդ ռիսկը կարող է լինել հեջավորված դիրքում յուրաքանչյուր հոդվածի տոկոսադրույքի ռիսկի մի մասը, ինչպես օրինակ որևէ ուղենշային տոկոսադրույք (օրինակ՝ ԼԻԲՈՐ),

ե) կազմակերպությունը նախորոշում է մեկ կամ ավելի հեջավորման գործիքներ գնորոշման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար,

զ) օգտագործելով վերը նշված (գ)-(ե) կետերում կատարված նախորոշումները՝ կազմակերպությունը սկզբնավորման պահին և հետագա

ժամանակաշրջաններում գնահատում է, թե արդյոք հեջը, ըստ ակնկալիքների, կլինի մեծապես արդյունավետ այն ժամանակաշրջանում, որի համար այն նախորոշվել է,

է) կազմակերպությունը պարբերաբար չափում է հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխությունը (ինչպես նախորոշված է (գ) կետում), որը վերագրելի է հեջավորված ռիսկին (ինչպես նախորոշված է (դ) կետում)՝ (բ) կետում որոշված վերագնորոշման ակնկալվող ամսաթվերի հիման վրա: Պայմանով, որ կազմակերպության արդյունավետության գնահատման փաստաթղթավորված մեթոդի օգտագործմամբ որոշվել է, որ հեջը փաստացի եղել է մեծապես արդյունավետ, կազմակերպությունը ճանաչում է հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխությունը որպես օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում և, ինչպես դա նկարագրված է 89Ա պարագրաֆում, ֆինանսական վիճակի մասին հաշվետվության երկու տողային հոդվածներից մեկում: Անհրաժեշտություն չկա բաշխել իրական արժեքի փոփոխությունը առանձին ակտիվների կամ պարտավորությունների վրա,

ը) կազմակերպությունը չափում է հեջավորման գործիքի (գործիքների) իրական արժեքի փոփոխությունը (ինչպես նախորոշված է (ե) կետում) և ճանաչում է այն որպես օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Հեջավորման գործիքի (գործիքների) իրական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում,

թ) ցանկացած անարդյունավետություն[1] կճանաչվի շահույթում կամ վնասում որպես (է) կետում և (ը) կետում նշված իրական արժեքների փոփոխության միջև տարբերություն:

ԿՈՒ115.Այս մոտեցումն ավելի մանրամասն նկարագրված է ստորև: Այս մոտեցումը պետք է կիրառվի միայն ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների պորտֆելի հետ կապված տոկոսադրույքի ռիսկի իրական արժեքի հեջի նկատմամբ:

ԿՈՒ116. ԿՈՒ114(ա) պարագրաֆում առանձնացված պորտֆելը կարող է ներառել ակտիվներ և պարտավորություններ: Որպես այլընտրանք՝ այն կարող է լինել միայն ակտիվներից կամ միայն պարտավորություններից բաղկացած պորտֆել: Պորտֆելն օգտագործվում է որոշելու համար ակտիվների կամ պարտավորությունների այն գումարը, որը կազմակերպությունը ցանկանում է հեջավորել: Սակայն պորտֆելն ինքը չի նախորոշվում որպես հեջավորված հոդված:

ԿՈՒ117.ԿՈՒ114(բ) պարագրաֆը կիրառելիս կազմակերպությունը որոշում է հոդվածի ակնկալվող վերագնորոշման ամսաթիվը որպես հոդվածի ակնկալվող մարման ամսաթվից և շուկայական դրույքների համապատասխան վերագնորոշման

[1] Այս համատեքստում կիրառվում են էականության նույն նկատառումները, ինչ բոլոր ՖՀՄՍ-ներում

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ամսաթվից ամենավաղը: Վերագնորոշման ակնկալվող ամսաթվերը գնահատվում են հեջի սկզբնավորման պահին և հեջի ուժի մեջ լինելու ամբողջ ընթացքում՝ հիմնված պատմական փորձի և այլ առկա տեղեկատվության վրա, ներառյալ վաղաժամկետ վճարումների չափերի, տոկոսադրույքների և դրանց միջև փոխհարաբերության վերաբերյալ տեղեկատվությունը և ակնկալիքները: Կազմակերպությունները, որոնք չունեն կազմակերպությանը հատուկ փորձ, կամ այդ փորձը անբավարար է, օգտագործում են համադրելի ֆինանսական գործիքների վերաբերյալ համանման կազմակերպությունների խմբի փորձը: Այս գնահատականները պարբերաբար վերանայվում են և նորացվում փորձի հիման վրա: Վաղաժամկետ վճարման հնարավորությամբ ֆիքսված դրույքով հոդվածի դեպքում վերագնորոշման ակնկալվող ամսաթիվն այն ամսաթիվն է, որի դրությամբ ակնկալվում է, որ նրա գծով կկատարվի վաղաժամկետ վճարում, եթե միայն այն չի վերագնորոշվում համապատասխան շուկայական դրույքների որևէ ավելի վաղ ամսաթվին: Համանման հոդվածների խմբի դեպքում վերագնորոշման ակնկալվող ամսաթվերի վրա հիմնված ըստ ժամանակահատվածների վերլուծությունը կարող է ունենալ յուրաքանչյուր ժամանակահատվածում խմբի տոկոսի, և ոչ թե առանձին հոդվածների բաշխման տեսք: Այսպիսի բաշխման նպատակներով՝ կազմակերպությունը կարող է կիրառել այլ մեթոդաբանություններ: Օրինակ, ակնկալվող վերագնորոշման ամսաթվերի հիման վրա ամորտիզացվող փոխառությունները ըստ ժամանակահատվածների բաշխելու համար այն կարող է օգտագործել վաղաժամկետ վճարումների չափերի բազմապատկիչ: Սակայն այսպիսի բաշխման մեթոդաբանությունը պետք է համապատասխանի կազմակերպության ռիսկերի կառավարման ընթացակարգերին և նպատակներին:

ԿՈՒ118.Որպես ԿՈՒ114(գ) պարագրաֆում նշված նախորոշման օրինակ, եթե վերագնորոշման որոշակի ժամանակաշրջանում կազմակերպությունը գնահատում է, որ ունի ֆիքսված տոկոսադրույքով 100ԱՄ արժեքով ակտիվներ և ֆիքսված տոկոսադրույքով 80ԱՄ արժեքով պարտավորություններ և որոշում է հեջավորել ամբողջ 20ԱՄ գումարի զուտ դիրքը, ապա այն նախորոշում է որպես հեջավորված հոդված 20ԱՄ գումարի ակտիվները (ակտիվների մի մասը)[2]: Նախորոշումն արտահայտվում է որպես «արժույթի որևէ գումար» (օրինակ, որևէ գումարի դոլար, եվրո, ֆունտ կամ ռանդ), և ոչ թե որպես առանձին ակտիվներ: Դրանից հետևում է, որ բոլոր ակտիվները (կամ պարտավորությունները), որոնցից առանձնացվում է հեջավորված գումարը, այսինքն վերը նշված օրինակում, ամբողջ 100ԱՄ արժեքով ակտիվները, պետք է լինեն՝

ա) հոդվածներ, որոնց իրական արժեքը փոփոխվում է՝ ի պատասխան հեջավորման ենթակա տոկոսադրույքների փոփոխության,

[2] Ստանդարտը թույլատրում է նախատեսել առկա որակվող ակտիվների կամ պարտավորությունների ցանկացած գումարը, այսինքն՝ այս օրինակում ակտիվների ցանկացած գումար՝ 0 ԱՄ-ից մինչև 100 ԱՄ

բ) հոդվածներ, որոնք կարող էին որակվել որպես իրական արժեքի հեջի հաշվառման ենթակա, եթե հեջավորման համար նախորոշվեին առանձին: Մասնավորապես, քանի որ ՖՀՄՍ 13-ը նշում է, որ ցպահանջ բնութագրով ֆինանսական պարտավորության (ինչպիսին են, օրինակ, ցպահանջ ավանդները և ժամկետային ավանդների որոշ տեսակները) իրական արժեքը ավելի փոքր չէ, քան վճարման ենթակա ցպահանջ գումարը՝ զեղչված այն առաջին ամսաթվից սկսած, երբ գումարը վճարելու պահանջը կարող է ներկայացվել, այսպիսի հոդվածը չի կարող որակվել որպես իրական արժեքի հեջի հաշվառման ենթակա՝ ցանկացած այն ժամանակահատվածում, որը տեղի է ունենում այն ամենակարճ ժամանակահատվածից հետո, երբ տիրապետողը կարող է ներկայացնել գումարը վճարելու պահանջ: Վերոնշյալ օրինակում հեջավորված դիրքը ակտիվների գումար է: Հետևաբար, այսպիսի պարտավորությունները նախորոշված հեջավորված հոդվածի մաս չեն կազմում, սակայն օգտագործվում են կազմակերպության կողմից՝ որոշելու համար ակտիվի այն գումարը, որը նախորոշվում է որպես հեջավորման ենթակա: Եթե այն դիրքը, որը կազմակերպությունը ցանկանում է հեջավորել, լիներ պարտավորությունների գումար, ապա նախորոշված հեջավորված հոդվածը ներկայացնող գումարը պետք է առանձնացվեր ֆիքսված տոկոսադրույքով պարտավորություններից, որոնք տարբեր են այն պարտավորություններից, որոնք կազմակերպությունից կարող է պահանջվել վճարել ավելի վաղ ժամանակաշրջանում, և ԿՈՒ126(բ) պարագրաֆի համաձայն հեջի արդյունավետության գնահատման համար կիրառվող տոկոսային չափը կհաշվարկվեր որպես տոկոս այդ այլ պարտավորություններից: Օրինակ, ենթադրենք կազմակերպությունը գնահատում է, որ վերագնորոշման որոշակի ժամանակահատվածում այն ունի 100ԱՄ արժեքով ֆիքսված տոկոսադրույքով պարտավորություններ՝ բաղկացած 40ԱՄ արժեքով ցպահանջ ավանդներից և 60ԱՄ արժեքով պարտավորություններից, որոնք չունեն ցպահանջ բնութագրեր, ինչպես նաև 70ԱՄ արժեքով ֆիքսված տոկոսադրույքով ակտիվներ: Եթե կազմակերպությունը որոշում է հեջավորել զուտ 30ԱՄ գումարի դիրքը ամբողջությամբ, ապա այն նախորոշում է որպես հեջավորված հոդված 30ԱՄ արժեքով պարտավորություններ կամ առանց ցպահանջ բնութագրի պարտավորությունների 50 տոկոսը[3]:

ԿՈՒ119.Կազմակերպությունը նաև պետք է համապատասխանի նախորոշման և փաստաթղթավորման 88(ա) պարագրաֆում նշված այլ պահանջների: Տոկոսադրույքի ռիսկի պորտֆելային հեջի դեպքում նշված նախորոշումը և փաստաթղթավորումը որոշակիացնում է կազմակերպության քաղաքականությունը բոլոր փոփոխականների

[3] 30 ԱՄ ÷ (100 ԱՄ - 40 ԱՄ) = 50 տոկոս

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

նկատմամբ, որոնք օգտագործվում են հեջավորման գումարը որոշելու համար, ինչպես նաև թե ինչպես է գնահատվում արդյունավետությունը, ներառյալ հետևյալը՝

ա) որ ակտիվները և պարտավորությունները պետք է ներառվեն պորտֆելային հեջում և այն հիմքը, որ պետք է օգտագործվի՝ պորտֆելից դրանց դուրս բերելու համար,

բ) ինչպես է կազմակերպությունը գնահատում վերագնորոշման ամսաթվերը, ներառյալ այն, թե տոկոսադրույքի վերաբերյալ ինչպիսի ենթադրություններ են ընկած վաղաժամկետ վճարումների չափերի գնահատման հիմքում, ինչպես նաև այդ գնահատականների փոփոխման հիմքերը: Նույն մեթոդն օգտագործվում է ինչպես հեջավորված պորտֆելում ակտիվի կամ պարտավորության ներառման պահին սկզբնական գնահատականների համար, այնպես էլ այդ գնահատականների հետագա վերանայումների համար,

գ) վերագնորոշման ժամանակահատվածների թիվը և տևողությունը,

դ) կազմակերպությունն ինչ հաճախականությամբ կստուգի արդյունավետությունը և ԿՈՒ126 պարագրաֆի երկու մեթոդներից որն այն կօգտագործի,

ե) այն մեթոդաբանությունը, որը կազմակերպությունը օգտագործում է՝ որպես հեջավորված հոդված նախորոշված ակտիվների կամ պարտավորությունների գումարը որոշելու համար, և, համապատասխանաբար, տոկոսային չափը, որը կազմակերպությունը օգտագործում է արդյունավետությունը ստուգելիս՝ օգտագործելով ԿՈՒ126(բ) պարագրաֆում նկարագրված մեթոդը,

զ) երբ կազմակերպությունը ստուգում է արդյունավետությունը՝ օգտագործելով ԿՈՒ126(բ) պարագրաֆում նկարագրված մեթոդը, արդյոք այն պետք է ստուգի արդյունավետությունը յուրաքանչյուր գնորոշման ժամանակահատվածի համար առանձին, բոլոր ժամանակահատվածների համար միասին, թե օգտագործելով նշված երկու ձևերի որևէ համակցություն:

Հեջավորման փոխհարաբերության նախորոշման և փաստաթղթավորման ընթացքում որոշակիացված քաղաքականությունը պետք է համապատասխանի կազմակերպության ռիսկերի կառավարման ընթացակարգերին և նպատակներին: Քաղաքականության փոփոխությունները չպետք է կատարվեն կամայականորեն: Դրանք պետք է արդարացված լինեն՝ հիմք ընդունելով շուկայական պայմանների փոփոխությունները և այլ գործոններ, պետք է հիմնված լինեն և հետևողականորեն համապատասխանեն կազմակերպության ռիսկերի կառավարման ընթացակարգերին ու նպատակներին:

ԿՈՒ120.Հեջավորման գործիքը, որին անդրադառնում է ԿՈՒ114(ե) պարագրաֆը, կարող է լինել մեկ ածանցյալ գործիք կամ ածանցյալ գործիքների պորտֆել, որոնցից բոլորը պարունակում են ԿՈՒ114(դ) պարագրաֆում նախորոշված հեջավորված

տոկոսադրույքի ռիսկին ենթարկվածություն (օրինակ, տոկոսադրույքի սվոփերի պորտֆել, որոնցից բոլորը պարունակում են ԼԻԲՈՐ-ի ռիսկին ենթարկվածություն): Ածանցյալ գործիքների նման պորտֆել կարող է պարունակել միմյանց չեզոքացնող ռիսկային դիրքեր: Սակայն, այն չի կարող պարունակել տրված օպցիոններ կամ զուտ տրված օպցիոններ, քանի որ սույն ստանդարտն[4] արգելում է այդպիսի օպցիոնների նախորոշումը որպես հեջավորման գործիքներ (բացառությամբ, երբ տրված օպցիոնը նախորոշվում է որպես չեզոքացնող՝ ձեռք բերված օպցիոնի համար): Եթե հեջավորման գործիքը հեջավորում է ԿՈՒ114(գ) պարագրաֆում նախորոշված գումարը մեկից ավելի վերագնորոշման ժամանակահատվածների համար, ապա այն բաշխվում է բոլոր ժամանակահատվածների վրա, որոնց այն հեջավորում է: Սակայն, ամբողջ հեջավորման գործիքը պետք է բաշխվի նշված վերագնորոշման ժամանակահատվածների վրա, քանի որ սույն ստանդարտը[5] թույլ չի տալիս, որպեսզի հեջավորման փոխհարաբերությունը նախորոշվի հեջավորման գործիքի այն ժամանակահատվածի մասնաբաժնի համար միայն, որի ընթացքում հեջավորման գործիքը դեռ ուժի մեջ է:

ԿՈՒ121.Երբ կազմակերպությունը չափում է վաղաժամկետ վճարման հնարավորությամբ հոդվածի իրական արժեքի փոփոխությունը համաձայն ԿՈՒ114(է) պարագրաֆի, ապա տոկոսադրույքների փոփոխությունն ազդում է վաղաժամկետ վճարման հնարավորությամբ հոդվածի իրական արժեքի վրա երկու եղանակով. այն ազդում է պայմանագրային դրամական հոսքերի իրական արժեքի վրա և վաղաժամկետ վճարման հնարավորությամբ հոդվածի մեջ պարունակվող վաղաժամկետ վճարման օպցիոնի իրական արժեքի վրա: Ստանդարտի պարագրաֆ 81-ը թույլատրում է կազմակերպությանը նախորոշել որպես հեջավորված հոդված ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության մի մասը, որն ունի միևնույն ռիսկին ենթարկվածություն, պայմանով, որ արդյունավետությունը հնարավոր է չափվել: Վաղաժամկետ վճարման հնարավորությամբ հոդվածների դեպքում 81Ա պարագրաֆը թույլ է տալիս հասնել դրան՝ նախորոշելով հեջավորված հոդվածը իրական արժեքի այն փոփոխության տեսանկյունից, որը վերագրելի է նախորոշված տոկոսադրույքի փոփոխությանը՝ հիմնվելով *ակնկալվող*, այլ ոչ թե *պայմանագրային* վերագնորոշման ամսաթվերի վրա: Սակայն հեջավորված տոկոսադրույքի փոփոխությունների ազդեցությունը այդ ակնկալվող վերագնորոշման ամսաթվերի վրա պետք է հաշվի առնվի հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխությունը որոշելիս: Համապատասխանաբար, եթե ակնկալվող վերագնորոշման ամսաթվերը վերանայվում են (օրինակ, ակնկալվող վաղաժամկետ վճարումների փոփոխությունը արտացոլելու համար), կամ եթե փաստացի վերագնորոշման ամսաթվերը տարբերվում են ակնկալվածներից, կառաջանա անարդյունավետություն, ինչպես դա նկարագրված է ԿՈՒ126 պարագրաֆում: Եվ հակառակը, ակնկալվող վերագնորոշման

[4] տես 77 և ԿՈՒ94 պարագրաֆները

[5] տես պարագրաֆ 75-ը

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ամսաթվերի փոփոխությունները, որոնք (ա) ակնհայտորեն առաջանում են հեջավորված տոկոսադրույքի փոփոխություններից տարբեր գործոններից, (բ) կորելիացիայի մեջ չեն հեջավորված տոկոսադրույքի փոփոխությունների հետ և (գ) կարող են արժանահավատորեն առանձնացվել հեջավորված տոկոսադրույքին վերագրելի փոփոխություններից (օրինակ, վաղաժամկետ վճարումների չափերի փոփոխությունները, որոնք ակնհայտորեն առաջանում են դեմոգրաֆիական գործոնների կամ հարկային կարգավորման փոփոխությունից, այլ ոչ թե տոկոսադրույքի փոփոխություններից) բացառվում են հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխությունը որոշելիս, քանի որ վերագրելի չեն հեջավորված ռիսկին: Եթե առկա է անորոշություն ակնկալվող վերագնորոշման ամսաթվերի փոփոխությունը առաջացրած գործոնի վերաբերյալ կամ կազմակերպությունն անկարող է արժանահավատորեն առանձնացնել հեջավորված տոկոսադրույքից առաջացած փոփոխությունները այլ գործոններից առաջացածներից, ապա համարվում է, որ փոփոխությունն առաջացել է հեջավորված տոկոսադրույքի փոփոխություններից:

ԿՈՒ122.Սույն ստանդարտը չի որոշակիացնում տեխնիկաները, որոնք օգտագործվում են ԿՈՒ114(է) պարագրաֆում նշված գումարը որոշելու համար այսինքն, հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է հեջավորված ռիսկին: Եթե այդ չափման համար օգտագործվում են վիճակագրական կամ գնահատման այլ տեխնիկաներ, ապա ղեկավարությունը պետք է ակնկալի, որ արդյունքը շատ մոտ լինի այն արդյունքին, որը կստացվեր հեջավորված հոդվածը կազմող բոլոր առանձին ակտիվները կամ պարտավորությունները չափելիս: Ճիշտ չէ ենթադրել, որ հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխությունները հավասար են հեջավորման գործիքի արժեքի փոփոխություններին:

ԿՈՒ123.89Ա պարագրաֆը պահանջում է, որ, եթե որևէ վերագնորոշման ժամանակահատվածի համար հեջավորված հոդվածն ակտիվ է, դրա արժեքի փոփոխությունը ներկայացվի ակտիվների կազմում մեկ առանձին տողային հոդվածով: Եվ հակառակը՝ եթե որևէ վերագնորոշման ժամանակահատվածի համար հեջավորված հոդվածը պարտավորություն է, ապա դրա արժեքի փոփոխությունը ներկայացվում է պարտավորությունների կազմում մեկ առանձին տողային հոդվածով: Դրանք ԿՈՒ114(է) պարագրաֆում նշված առանձին տողային հոդվածներն են: Հատուկ բաշխում ըստ առանձին ակտիվների (կամ պարտավորությունների) չի պահանջվում:

ԿՈՒ124.ԿՈՒ114(թ) պարագրաֆը նշում է, որ անարդյունավետություն է առաջանում այն չափով, որով որհեջավորված ռիսկին վերագրելի հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխությունը տարբերվում է հեջավորման ածանցյալ գործիքի իրական արժեքի փոփոխությունից: Այդպիսի տարբերությունը կարող է առաջանալ մի շարք պատճառներով, ներառյալ՝

ա) վերագնորոշման փաստացի ամսաթվերը տարբերվում են ակնկալվածներից, կամ ակնկալվող վերագնորոշման ամսաթվերը վերանայվում են,

բ) հեջավորված պորտֆելի հոդվածները արժեզրկվում կամ ապաճանաչվում են,

գ) հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի վճարման ամսաթվերը տարբերվում են, և

դ) այլ պատճառներ (օրինակ, երբ հեջավորված հոդվածներից մի քանիսը ավելի ցածր տոկոս են կրում, քան ուղենշային տոկոսադրույքը, որի համար դրանք նախորոշվել են որպես հեջավորված, և առաջացող անարդյունավետությունն այնքան մեծ չէ, որպեսզի պորտֆելն ամբողջությամբ չորակվի որպես հեջի հաշվառման ենթակա):

Այսպիսի անարդյունավետությունը[6] պետք է բացահայտվի և ճանաչվի շահույթում կամ վնասում:

ԿՈՒ125. Սովորաբար հեջի արդյունավետությունը կբարելավվի՝

ա) եթե կազմակերպությունը վաղաժամկետ վճարման տարբեր բնութագրերով հոդվածները բաշխում է այնպես, որ հաշվի են առնվում վաղաժամկետ վճարման վարքագծերի տարբերությունները,

բ) երբ պորտֆելում հոդվածների քանակը լինի ավելի մեծ: Երբ միայն մի քանի հոդվածներ են կազմում պորտֆելը, հավանական է համեմատաբար մեծ անարդյունավետություն, եթե հոդվածներից մեկի գծով վաղաժամկետ վճարումը կատարվում է ակընկալվածից ավելու վաղ կամ ուշ: Եվ հակառակը, երբ պորտֆելը կազմված է ավելի շատ հոդվածներից, վաղաժամկետ վճարումների վարքագիծը կարելի է կանխատեսել ավելի ճշգրիտ,

գ) երբ օգտագործվող վերագնորոշման ժամանակահատվածներն ավելի սեղմ են (օրինակ, 1 ամսյա վերագնորոշման ժամանակահատվածներ 3 ամսվա փոխարեն): Ավելի սեղմ գնորոշման ժամանակահատվածները նվազեցնում են հեջավորված հոդվածի և հեջավորման գործիքի վերագնորոշման և վճարման ամսաթվերի (վերագնորոշման ժամանակահատվածի ընթացքում) միջև անհամապատասխանության ազդեցությունը,

դ) հեջավորված հոդվածի փոփոխությունները (օրինակ, վաղաժամկետ վճարումների ակնկալիքների փոփոխության պատճառով) արտացոլելու նպատակով հեջավորման գործիքի գումարի ճշգրտման ավելի մեծ հաճախականության դեպքում:

ԿՈՒ126.Կազմակերպությունը պարբերաբար ստուգում է արդյունավետությունը: Եթե վերագնորոշման ամսաթվերի գնահատականները փոխվում են կազմակերպության կողմից արդյունավետությունը գնահատելու որևէ ամսաթվի և հաջորդ այդպիսի ամսաթվի միջև, ապա այն պետք է հաշվարկի արդյունավետության գումարը հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

[6] Այս համատեքստում կիրառվում են էականության նույն նկատառումներն, ինչ բոլոր ՖՀՄՍ-ներում

ա) որպես հեջավորման գործիքի իրական արժեքի փոփոխության (տես ԿՈՒ114(ը) պարագրաֆը) և հեջավորված տոկոսադրույքի փոփոխություններին (ներառյալ այն ազդեցությունը, որը հեջավորված տոկոսադրույքի փոփոխություններն ունեն որևէ պարունակվող վաղաժամկետ վճարման օպցիոնի իրական արժեքի վրա) վերագրելի ամբողջ հեջավորված հոդվածի արժեքի փոփոխության տարբերություն, կամ

բ) օգտագործելով հետևյալ մոտավոր հաշվարկը: Կազմակերպությունը՝

(i) հաշվարկում է յուրաքանչյուր վերագնորոշման ժամանակահատվածում ակտիվների (կամ պարտավորությունների) տոկոսային համամասնությունը, որը հեջավորված էր՝ արդյունավետության ստուգման վերջին ամսաթվի դրությամբ գնահատված վերագնորոշման ամսաթվերի հիման վրա,

(ii) կիրառում է այդ տոկոսը այդ գնորոշման ժամանակահատվածում իր կողմից վերանայված գումարի գնահատականի նկատմամբ՝ հաշվարկելու համար հեջավորված հոդվածի գումարը՝ հիմնված իր կողմից վերանայված գնահատականի վրա,

(iii) հաշվարկում է հեջավորված հոդվածի՝ իր կողմից վերանայված գնահատականի իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է հեջավորված ռիսկին, և ներկայացնում է այն ըստ ԿՈՒ114(է) պարագրաֆի,

(iv) ճանաչում է անարդյունավետությունը, որը հավասար է (iii) կետում որոշված գումարի և հեջավորման գործիքի իրական արժեքի փոփոխության (տե՛ս ԿՈՒ114(ը) պարագրաֆը) տարբերությանը:

ԿՈՒ127.Արդյունավետությունը չափելիս կազմակերպությունը տարբերակում է առկա ակտիվների (կամ պարտավորությունների) գնահատված վերագնորոշման ամսաթվերի վերանայումները նոր ակտիվների (կամ պարտավորությունների) սկզբնավորումից՝ միայն առաջինը համարելով անարդյունավետություն առաջացնող: Գնահատված վերագնորոշման ամսաթվերի բոլոր վերանայումները (բացի նրանցից, որոնք բացառվում են ԿՈՒ121 պարագրաֆի համաձայն), ներառյալ առկա հոդվածների ցանկացած վերաբաշխումներ ժամանակահատվածների միջև, ներառվում են՝ ԿՈՒ126(բ)(ii) պարագրաֆի համաձայն, որևէ ժամանակահատվածում գնահատված գումարը վերանայելիս և, հետևաբար, արդյունավետությունը չափելիս: Անարդյունավետությունը վերը նշված ձևով ճանաչելուց հետո կազմակերպությունը յուրաքանչյուր վերագնորոշման ժամանակահատվածում հաստատում է ընդհանուր ակտիվների (կամ պարտավորությունների) նոր գնահատական, ներառյալ նոր ակտիվները (կամ պարտավորությունները), որոնք սկզբնավորվել են արդյունավետության նախորդ իր գնահատումից հետո և նախորոշում է նոր գումար որպես հեջավորված հոդված և նոր տոկոսային համամասնություն որպես

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

հեջավորված տոկոսային համամասնություն: Այնուհետև, ԿՈՒ126(բ) պարագրաֆում նշված գործընթացներն այն կրկնում է արդյունավետության հաջորդ ստուգման ամսաթվին:

ԿՈՒ128.Հոդվածները, որոնք սկզբնապես բաշխվել էին վերագնորոշման որևէ ժամանակահատվածի վրա, կարող են ապաճանաչվել ակնկալվածից վաղ վաղաժամկետ վճարման կամ արժեզրկման արդյունքում դուրսգրումների կամ վաճառքի պատճառով: Երբ սա տեղի է ունենում, ԿՈՒ114(է) պարագրաֆում նշված առանձին տողային հոդվածում ներառված իրական արժեքի փոփոխության գումարը, որը վերաբերում է ապաճանաչված հոդվածին, պետք է դուրս բերվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից և ներառվի այդ հոդվածի ապաճանաչման արդյունքում առաջացած օգուտում կամ կորստում: Այս նպատակով՝ անհրաժեշտ է իմանալ այն վերագնորոշման ժամանակահատվածը (ժամանակահատվածները), որի (որոնց) վրա բաշխվել էր ապաճանաչված հոդվածը, որովհետև դա որոշում է այն վերագնորոշման ժամանակահատվածը (ժամանակահատվածները), որից (որոնցից) այն պետք է դուրս բերվի, և, հետևաբար, այն գումարը, որը պետք է դուրս բերվի ԿՈՒ114(է) պարագրաֆում նշված առանձին տողային հոդվածից: Հոդվածն ապաճանաչվելիս՝ եթե հնարավոր է որոշել, թե որ ժամանակահատվածում էր այն ընդգրկված, այն դուրս է բերվում այդ ժամանակահատվածից: Եթե դա հնարավոր չէ որոշել, ապա այն դուրս է բերվում ամենավաղ ժամանակահատվածից՝ եթե ապաճանաչումը տեղի է ունեցել ակնկալվածից մեծ վաղաժամկետ վճարումների արդյունքում, կամ բաշխվում է համակարգված և ռացիոնալ հիմքով ապաճանաչված հոդվածը ներառող բոլոր ժամանակահատվածների վրա, եթե հոդվածը վաճառվել է կամ արժեզրկվել:

ԿՈՒ129. Բացի այդ, որոշակի ժամանակահատվածի վերաբերող ցանկացած գումար, որը չի ապաճանաչվել, երբ այդ ժամանակահատվածը լրացել է, այդ ժամանակ ճանաչվում է շահույթում կամ վնասում (տե՛ս 89Ա պարագրաֆը): Օրինակ, ենթադրենք կազմակերպությունը բաշխում է հոդվածներ ըստ երեք վերագնորոշման ժամանակա-հատվածների: Նախորդ վերանախորոշման ժամանակ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության առանձին տողային հոդվածում ներկայացված իրական արժեքի փոփոխությունը 25ԱՄ գումարով ակտիվ էր: Այդ գումարն ներկայացնում է 1, 2, և 3 ժամանակահատվածներին վերագրելի, համապատասխանաբար, 7ԱՄ, 8ԱՄ և 10ԱՄ գումարները: Հաջորդ վերանախորոշման ժամանակ ժամանակահատված 1-ին վերագրված ակտիվները կամ իրացվել են, կամ էլ վերաբաշխվել են այլ ժամանակահատվածների վրա: Հետևաբար, 7ԱՄ գումարը ապաճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից և ճանաչվում է շահույթում կամ վնասում: 8ԱՄ և 10ԱՄ գումարները այժմ վերագրելի են, համապատասխանաբար, 1 և 2 ժամանակահատվածներին: Այս մնացած ժամանակահատվածներն այնուհետև ճշգրտվում են ըստ անհրաժեշտության՝ հաշվի առնելու իրական արժեքի փոփոխությունները, ինչպես նկարագրված է ԿՈՒ114(է) պարագրաֆում:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ԿՈՒ130.Որպես նախորդ երկու պարագրաֆների պահանջների լուսաբանում՝ ենթադրենք կազմակերպությունը բաշխել է ակտիվներ՝ յուրաքանչյուր վերագնորոշման ժամանակահատվածին հատկացնելով պորտֆելի որևէ տոկոսային համամասնություն: Ենթադրենք նաև, որ այն բաշխել է 100-ական ԱՄ առաջին երկու ժամանակահատվածներից յուրաքանչյուրի վրա: Երբ առաջին վերագնորոշման ժամանակահատվածը լրանում է, 110 ԱՄ գումարի ակտիվներ ապաճանաչվում են ակնկալված կամ չակնկալված մարումների պատճառով: Այս դեպքում ԿՈՒ114(է) պարագրաֆում նշված առանձին տողային հոդվածում ներառված ամբողջ գումարը, որը վերաբերում է առաջին ժամանակահատվածին՝ գումարած երկրորդ ժամանակահատվածին վերաբերող գումարի 10 տոկոսը, դուրս են բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից:

ԿՈՒ131.Եթե վերագնորոշման որևէ ժամանակահատվածի հեջավորված գումարը նվազեցվում է՝ առանց համապատասխան ակտիվները (կամ պարտավորությունները) ապաճանաչելու, ապա ԿՈՒ114(է) պարագրաֆում նշված առանձին տողային հոդվածում ներառված գումարը, որը վերաբերում է նվազմանը, պետք է ամորտիզացվի 92-րդ պարագրաֆի համաձայն:

ԿՈՒ132.Կազմակերպությունը կարող է ցանկանալ կիրառել ԿՈՒ114–ԿՈՒ131 պարագրաֆներում ներկայացված մոտեցումը պորտֆելային հեջի նկատմամբ, որը նախկինում հաշվառվել է որպես դրամական հոսքերի հեջ համաձայն ՀՀՄՍ 39-ի: Այսպիսի կազմակերպությունը չեղյալ է համարում 101(դ) պարագրաֆի համաձայն դրամական հոսքերի հեջի նախորդ նախորոշումը և կիրառում է այդ պարագրաֆում նշված պահանջները: Այն նաև վերանախորոշում է հեջը որպես իրական արժեքի հեջ և կիրառում է ԿՈՒ114–ԿՈՒ131 պարագրաֆներում ներկայացված մոտեցումը առաջ-ընթաց կերպով հետագա հաշվառման ժամանակաշրջանների նկատմամբ:

## Անցումային դրույթներ (103–108Գ պարագրաֆներ)

ԿՈՒ133.Կազմակերպությունը կարող է նախորոշած լինել ներխմբային կանխատեսված գործարքը որպես հեջավորված հոդված 2005 թվականի հունվարի 1-ին կամ դրան հաջորդող ամսաթվին սկսվող առաջին տարեկան ժամանակաշրջանի սկզբից (կամ համեմատական տեղեկատվության վերաներկայացման նպատակով, ավելի վաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբից) այնպիսի հեջում, որը կորակվեր որպես հեջի հաշվառման ենթակա՝ համաձայն սույն ստանդարտի (փոփոխված պարագրաֆ 80-ի վերջին նախադասությամբ): Այդպիսի կազմակերպությունը կարող է կիրառել նման նախորոշումը համախմբված ֆինանսական հաշվետվություններում, հեջի հաշվառման կիրառման նպատակով, 2005 թվականի հունվարի 1-ին կամ դրան հաջորդող ամսաթվին սկսվող առաջին տարեկան ժամանակաշրջանի սկզբից (կամ ավելի վաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբից): Այդ կազմակերպությունը պետք է նաև կիրառի ԿՈՒ99Ա և ԿՈՒ99Բ պարագրաֆները՝ 2005 թվականի հունվարի 1-ին կամ դրան հաջորդող ամսաթվին սկսվող տարեկան ժամանակաշրջանի սկզբից:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Սակայն, 108Բ պարագրաֆի համաձայն, այն կարող է չկիրառել ԿՈՒ99Բ պարագրաֆը ավելի վաղ ժամանակաշրջանների համեմատական տեղեկատվության նկատմամբ:

*© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ*